

Գևորգ Ա. Ճաղարյան

**ԹՈՄԱՍ ՔԱՐԼԱՅԼԻ «ՀԵՐՈՄՆԵՐԻ,
ՀԵՐՈՍԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՀԵՐՈՍԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ» ԵՐԿԸ**

Մաս երկրորդ: Հերոսն իբրև աստվածություն,
մարգարե և բանաստեղծ*

Բանալի բառեր – Թոմաս Քարլայլ, բանախոսություն, հերոս, հերոսապաշտություն, աստվածություն, Օդին, սկանդինավյան դիցաբանություն, հեթանոսություն, Քրիստոս, քրիստոնեություն, **մեծն մարդ**, **օգտապաշտություն**, կրոն, հավատ, մարգարե, Մուհամմադ, իսլամ, մարգարեություն, **անկեղծություն**, հերոսների **շրջելիություն**, բանաստեղծ, Դանտե, Շեքսպիր:

Մուտք

Թոմաս Քարլայլի (1795–1881) բանախոսությունների «լավագույն շարքի»¹ տպագիր հրատարակության կառույցը մեկին և պարզորոշ է: Այդուհանդերձ, գրքի եռամաս թեմատիկ բաժանումը, ինչպես երևում է խորագրից, խնդրո քննության հարմար շրջանակ է առաջադրում՝ այդու ի սկզբանե ակնարկելով հերոսի, հերոսապաշտի և տվյալ պատմական միջավայրի սերտ փոխառնչությունների մասին²: Գրքի ենթախորագրային բաժանումները հետևյալն են՝

Բանախոսություն I: Հերոսն իբրև աստվածություն: Օդին: Հեթանոսություն. սկանդինավյան դիցաբանություն:

Բանախոսություն II: Հերոսն իբրև մարգարե: Մուհամմադ. իսլամ:

Բանախոսություն III: Հերոսն իբրև բանաստեղծ: Դանտե, Շեքսպիր:

*Հոդվածաշարի առաջին մասը, որում քննության են առնվել Քարլայլի երկի գրության առիթն ու հանգամանքները, տես «ՎԷՆ», 2020, N 3: Հոդվածաշարի երկրորդ մասն ընդունվել է տպագրության 10.02.2021:

1 The Collected Letters of Thomas and Jane Welsh Carlyle. Ed. by C. R. Sanders, K. J. Fielding, C. de L. Ryals, Ian Campbell, John Clubbe, Aileen Christianson, Hilary J. Smith, Janetta Taylor, Bill Bell. 48 vols. to date. Durham, N. C.: Duke University Press, 1970 on, h. 12, էջ 151, այսուհետ Letters:

2 Տես Michael K. Goldberg, Introduction, in Thomas Carlyle. On Heroes, Hero-Worship, and The Heroic in History. Ed. Michael K. Goldberg, Joel J. Brattin, and Mark Engel. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 1993, էջ xl:

ՎԷՆ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021

Բանախոսություն IV: Հերոսն իբրև քահանա: Լութեր, Ռեֆորմացիա. Նոքս, պուրիտանիզմ:

Բանախոսություն V: Հերոսն իբրև գրող: Ջոնսոն, Ռուսսո, Բրոնս:

Բանախոսություն VI: Հերոսն իբրև արքա: Քրոմվել, Նապոլեոն. արդի հեղափոխականություն:

Քարլայլի համոզմամբ՝ «հերոսների այս վեց տիպերը՝ ընտրված հույժ հեռավոր երկրներից ու դարերից, մեր ազնիվ հայացքի ներքո լույս կափռեն մի շարք իրողությունների վրա: Եթե մենք պատշաճին զննենք նրանց, ապա որոշ պատկերացում կկազմենք համաշխարհային պատմության բուն էության մասին»³: Արդ, առանձին քննության առնենք հերոսների այս վեց տիպերը⁴:

1. Հերոսն իբրև աստվածություն: Օդին: Հեթանոսություն. սկանդինավյան դիցաբանություն

Արդեն իսկ բանախոսության նախաբանում Քարլայլը մատնանշում է **հեռուսականի**⁵ թեմայի ընդարձակությունը. «[...] Հույժ ակնհայտ է, որ սա ընդարձակ թեմա է՝ արժանի միանգամայն այլ մեկնության, քան մենք կարող ենք ակնկալել ներկայումս: Ընդարձակ մի թեմա, հիրավի անսպառ. ծավալուն, ինչպես ինքնին համաշխարհային պատմությունը: Քանզի, ըստ իս, համաշխարհային պատմությունը, պատմությունն այն բանի, թե ինչ է մարդ արարածն ի կատար ածել այս աշխարհում, ըստ էության **մեծն մարդկանց** (Great Men) պատմությունն է, որոնք [ապրել] ու գործել են այստեղ»⁶:

1840 թ.՝ վաղ բանախոսությունների ստույգ թեմայի ընտրությունից մեկ ամիս առաջ, Քարլայլը «սկանդինավյան երկեր էր կարդում»⁷: Նա տարված էր հատկապես իսլանդական «**Ֆրիստիոֆի սաք**»-ի (շուրջ 13-14-րդ դդ.) ընթերցանությամբ, որն առաջնային խթան դարձավ նրա համար՝ խորամուխ լինելու սկանդինավյան դիցաբանության մեջ⁸:

Հետագոտական գրականության մեջ ցորս խնդրո առարկա է Քարլայլի կողմից հենց **Օդինի**⁹ իբրև հերոս-աստվածության ընտրությունը⁹: Բանն այն

3 Thomas Carlyle. On Heroes, Hero-Worship, and The Heroic in History. Ed. Michael K. Goldberg, Joel J. Brattin, and Mark Engel. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 1993, էջ 4, այսուհետ՝ On Heroes:

4 Սույն հոդվածում կներկայացնենք հերոսների վեց տիպերից երեքը, իսկ մյուսները՝ հոդվածաշարի երրորդ մասում, որը լույս կտեսնի հանդեսի հաջորդ համարներից մեկում:

5 Այստեղ և հաջորդիվ թավատառ ընդգծումները մերն են Պ. Ճ.:

6 On Heroes, էջ 3:

7 Letters, h. 12, էջ 32 (ծնթ. 3):

8 Քարլայլի առաջին բանախոսության թեմայի աղբյուրների հանգամանակից քննությունը տես On Heroes, էջ 229-230, ինչպես նաև Herbert Wright. “The Sources of Carlyle’s Lecture on ‘The Hero as Divinity’”, in *Modern Language Review* 13 (1918), էջ 87-90:

9 Տես, օրինակ, Charles H. Haws. “Carlyle’s Concept of History in *Heroes and Hero-Worship*”, in Thomas Carlyle 1981. Papers given at the International Thomas Carlyle Centenary Symposium at the University of Mainz, ed. Horst W. Drescher. Frankfurt am Main: Peter Lang Verlag, 1983, էջ 154, որում հեղինակը նկատում է, որ «Քարլայլի կողմից Օդինի ընտրությունը՝ ներկայացնելու աստվածային հերոսին, արտառոց է թվում ոչ թե այն իմամբ, որ նա այդ դերում չէր ընտրել, օրինակ, Բուդային, Կոնֆուցիոսին կամ Քրիստոսին, այլ այն պատճառով, որ Օդին աստծո/մարդու

է, որ Քարլայլի մտակերտվածքից ու աշխարհայացքից ելնելով՝ որոշ հետազոտողների համոզմամբ այդ դերում առավել օրինաչափ կլինեին Քրիստոսի կերպարի ընտրությունը¹⁰ իբրև «հերոսներից մեծագույնի»¹¹: Այս առումով ուշագրավ է Մ. Գոլդբերգի խորունկ դիտարկումն առ այն, որ Քարլայլն Օդինի կերպարի և առհասարակ հեթանոսական պաշտամունքի ու սկանդինավյան դիցաբանության քննության միջոցով հետամուտ էր նոր ազդակներ հաղորդելու Վիկտորյանական դարաշրջանի քրիստոնեությանը՝ այն **նորոգելու** աղագավ¹²: Դ. Սորենսենի դիպուկ բանաձևմամբ՝ Քարլայլը ձգտում էր **թարմացնելու** քրիստոնեությունը առասպելակերտ տարրերով¹³, որոնք ընդհանրական էին բոլոր մեծ կրոնների վերաբերմամբ¹⁴, «բոլորն էլ ճշմարտություն էին կրում իրենց մեջ, հակառակ դեպքում մարդիկ չէին ընդունի դրանք»¹⁵: Այս դիտանկյունից **Քրիստոսը հանդես է գալիս որպես Օդինի ու Մուհամմադի ժառանգորդ**¹⁶: Այլ կերպ ասած՝ քանզի առ հերոսապաշտություն խթանը ոչ միայն իր դարն ապրած «հեթանոսության», այլև «շատ ավելի բարձր կրոնների»¹⁷ էությունն էր, ապա սկանդինավների առերևույթ արտառոց առասպելները հստակորեն զուգահեռվում էին 19-րդ դարի քրիստոնեությանը¹⁸, որն էլ իր հերթին **ձգնաժամով նորացման** ուղի էր բռնել՝ ազատվելով **գերբնական հավատի** հանդերձանքից¹⁹: Օրվա տիրապետող փիլիսոփայության՝ բենթամյան **օգտապաշտության** (utilitarianism) պայմաններում քրիստոնեական դավանանքի ուժասպառ կացությունը²⁰ Քարլայլին դրդեց «նոր առասպելույթով (mythus) կերպարանելու այդ կրոնի աստվածային ոգին»²¹: Միով բանիվ՝ իր բանախոսությունում **Քրիստոսի փոխարեն**

պատմական հենքը թույլ է: Առհասարակ, հետազոտողները համակարծիք են առ այն, որ Քարլայլի հերոսների ընտրությունը հաճախ տարօրինակ ու կամայական է: Տե՛ս **Robert A. Donovan**. "Carlyle and the Climate of Hero-Worship", in *University of Toronto Quarterly*, Volume 42, Number 2, Winter 1973, էջ 123:

- 10 Տե՛ս նույն տեղում, էջ 124, որտեղ Դոնովանն անմիջական հարցադրում է անում՝ «ինչո՞ւ Օդինն և ոչ Քրիստոս»:
- 11 On Heroes, էջ 12: Հատկանշելի է, որ Քարլայլը հերոսապաշտության մեջ էր տեսնում «քրիստոնեության սաղմը» (նույն տեղում, էջ 11-12), իսկ քրիստոնեությունը համարում «հերոսապաշտության բարձրագույն տիպարը» (նույն տեղում, էջ 13-14):
- 12 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xi: Դիպուկ է նկատել հետազոտողներից Ռուբ ափՈրբերտսը Քարլայլի միտումնավոր բառախաղը (Christianity-ն Christianity ձևով գործածելը) **Christianism-Paganism** զուգահեռը հավելյալ շեշտելու նպատակով, տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 80:
- 14 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, in **Thomas Carlyle**, *Heroes, Hero-Worship, and the Heroic in History*. Edited by **David R. Sorensen** and **Brent E. Kinsler**. Rethinking the Western Tradition. New Haven and London: Yale University Press, 2013, էջ 9:
- 15 On Heroes, էջ 6:
- 16 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 9, ինչպես նաև **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 75. «Օդինի մասին ողջ բանախոսությունը Քրիստոսի կերպարի և քրիստոնեության վաղ շրջանի թողարկու պատումն է [...]»:
- 17 On Heroes, էջ 11:
- 18 Բացառիկ է բանախոսի անմիջական դիտարկումը. «Մարդիկ քրիստոնեությանը [մի օր] այնպիսի հայացքով կնայեն, որով մենք նայում ենք հեթանոսությանը», տե՛ս **Ian Campbell**. "Conversations with Carlyle: The Monckton Milnes diaries", in *Prose Studies* 8:1 (1985), էջ 53:
- 19 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xi:
- 20 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 8:
- 21 **Thomas Carlyle**. Sartor Resartus: The Life and Opinions of Herr Teufelsdröckh in Three Books. Ed. **Rodger Tarr** and **Mark Engel**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 2000, էջ 144:

Օդինին ընտրելով իբրև տիպական հերոս-աստվածության (ինչպես որ Մուհամմադին՝ Մովսեսի և աստվածաշնչյան մարգարեների փոխարեն²²)՝ Քարլայլն իր լսարանին մղում էր վերստին ու նորովի մտորելու սեփական կրոնի²³, քրիստոնեական հայացքների շուրջ²⁴:

Ինչպես ասի Ռեդերիքսի սրամիտ բնորոշմամբ՝ Քարլայլի այս բանախոսությունները համակված են նրա այն համոզմունքով, որ «հոգևորն ու աշխարհիկը ի մի են», իսկ «ասարծուն որպես հերոս ընտրելը ինքնին հանդուգն քայլ է և հարակ պնդում՝ ընդդեմ գերբնականության»²⁵: Աստվածության այս աշխարհիկացումը մաս էր կազմում նաև Քարլայլի ճարտար մարտավարության՝ քողակերծելու Օքսֆորդյան շարժման²⁶ առաջ քերած բանավեճերի սահմանափակությունը²⁷:

Ջանգառելով Իսրայելի ու Հունաստանի մարգարեներին և սկսելով իր պատմական քննությունը առասպելական նախապատմության առանցքային՝ Օդինի կերպարից, որը «սկանդինավյան հեթանոսության կենտրոնական կերպարն է [...] հերոսականի [դրսևորման] հնագույն, նախասկզբնական կերպը»²⁸, Քարլայլը, ի տարբերություն բանախոսական նախորդ շարքերի, ակներևաբար հրաժարվեց որևէ խստորոշ ժամանակագրական կառույցից՝ փոխարենը նախընտրելով հերոսական տիպերի ու հերոսապաշտ հասարակությունների համար լայնորեն տիպաբանական մի սխեմա, որին հատկորոշ են թեմատիկ խորությունն ու հղացական միասնությունը, տևափոխական գործընթացը գաղափարների ու հավատալիքների պատմության հոլովույթում²⁹: Հակառակ դարվիչյան վերընթաց էվոլյուցիոն հայեցակարգի՝ «Հերոսների մասին»-ում Քարլայլի պատմական կադապարը հոռետեսական ու վայրընթաց սանդղակ է ներկայացնում³⁰: Հերոսա-

22 Օ. Դադլի Էդվարդսն այն կարծիքն է, որ հերոսների իր փառանգում աստվածաշնչյան կերպարների ընտրությունից Քարլայլին ետ էր պահել գերմանացի աստվածաբան Յոհան Գ. Ալխտորհի (1752-1827) եռահատորյակը Հին Կտակարանի վերաբերյալ, որը քննության է առնված պատմաքննադատական մեթոդով: Մինչդեռ Գրիմ եղբայրները կամ անվագն Յակոբ Գրիմը (1785-1863) Քարլայլին ուղղորդել էին դեպի տևողական դիցաբանությունը, որում նա բավականաչափ «սերմեր» գտավ՝ Օդինին մարդկային հերոս համարելու, տես Owen Dudley Edwards. "The Tone of the Preacher. Carlyle as Public Lecturer in On Heroes, Hero-Worship, and the Heroic in History", in Thomas Carlyle. Heroes, Hero-Worship, and the Heroic in History. Edited by David R. Sorensen and Brent E. Kinsler, էջ 207: Ավելին, Յակոբ Գրիմի համոզմամբ՝ սկանդինավյան ու տևողական հեթանոսությունում Օդինի գերակայությունը մյուս աստվածությունների նկատմամբ ամ մենաստվածություն հակման դրսևորում է, տես Jacob Grimm. Teutonic Mythology. 1835. Trans. James Steven Stallybrass. 4 vols. 1883-88. New York: Dover, 1966, h. 1, էջ 164: Չի բացառվում, որ այս իրողությունը ևս իր դերն է խաղացել Քարլայլի հենց Օդինին իբրև հերոս-աստվածություն ընտրելու հարցում:

23 Հատկանշական է, որ Քարլայլն իր առաջին բանախոսությունում հերոսականի հղացքի հենց կրոնական հայեցակերպն է քննում, ինչի մասին նա ինքն է ուղղակիորեն վկայում, տես On Heroes, էջ 5:

24 Տես Michael K. Goldberg, Introduction, էջ xli:

25 Ruth apRoberts, մշվ. աշխ., էջ 78:

26 19-րդ դարում Օքսֆորդի համալսարանում կենտրոնացած շարժում, որ ձգտում էր Անգլիկանական եկեղեցու շրջանակներում նոր շունչ հաղորդելու կաթոլիկական կամ հռոմեակաթոլիկական մտքին ու պրակտիկային ի հակադրություն եկեղեցու բողոքական միտումների: Հիմնական փաստարկն այն էր, որ Անգլիկանական եկեղեցին իր պատմությամբ և ինքնությամբ հիրավի կաթոլիկական է: Շարժման անմիջական պատճառը 1828-1832 թթ. պետության և պաշտոնական եկեղեցու միջև փոխհարաբերությունների փոփոխությունն էր:

27 Տես David R. Sorensen, Introduction, էջ 9:

28 On Heroes, էջ 5:

29 Տես Michael K. Goldberg, Introduction, էջ lvii:

30 Պարզ ասած՝ ի տարբերություն բնության մեջ պարզ տեսակներից դեպի բարդը աստիճանական զարգացման սոցիալական կամ հասարակական կյանքում այդ շարժումը հակընթաց է՝ բարդից դեպի պարզումանկը: Այս առումով նաև ուշագրավ է «Չաստվածների մթնշաղ»-ում (1889) Ֆ. Նիցշեի (1844-1900) խորունկ դիտարկումն ամ այն, որ դարվիչյան գոյության պայքարում պայմանները «ուժեղների, գերադասելիների, երջանիկ բացառությունների

կանի դրսևորման տարակերպերը ժամանակի ընթացքում սեղմվում-կրճատվում են, և սոցիալական հանգամանքներն ու իրողությունները հարաձուլն կերպով դժվարացնում են հերոսական ոգու ինքնադրսևորումը: Ուստի իր դարաշրջանի հերոսական տիպերի քննությանը մոտենալուն համընթաց Քարլայլը ստիպված է կենտրոնանալ այն հանգամանքների վրա, որոնք խոչընդոտում են հերոսականի ծավալմանը³¹:

Օդինի կերպարի քարլայլյան մեկնության ամենից ուշագրավ փաստերից է պատմական կամ հնագիտական վկայությունների լիակատար բացակայությունը: Քարլայլը նույնիսկ ծաղրում է գերմանացի բանագետ, դիցաբան Յակոբ Գրիմի (1785-1863)՝ Օդինի պատմականությունն ու իրական գոյությունը ստուգաբանական նյութի հիմամբ հերքելու փորձը³²: Փոխարենը Քարլայլը շարունակ համառում է Օդին աստվածության կենդանի մարդ լինելու հարցում՝ կտրականապես հրաժարվելով ընդունել հակառակը փաստող որևէ ապացույց և կանխադրելով իր հետևյալ հիմնարար հարցադրումը՝ «ինչպե՞ս է Օդին մարդը սկսել աստված համարվել, գլխավոր աստվածություն»³³:

Պատահական չէ, որ Քարլայլի աղբյուրները գրեթե ամբողջությամբ առասպելական ու գրական բովանդակության են՝ սկանդինավյան **Էդդաները**: Նրան ակնհայտորեն չի մտահոգում փաստական կամ պատմական ճշմարտությունը. նա համակ կլանված է պատկերավոր կամ կրոնական ճշմարտությամբ³⁴: Այստեղ ի հայտ է գալիս Քարլայլի **հերոսականի** գաղափարի էական հատկորոշիչներից մեկը. տվյալ դեպքում բնավ փույթ չէ՝ գոյություն՝ն է ունեցել հերոս Օդինը, թե՞ ոչ³⁵, կարևորն այն է, որ նրա հանդեպ հերոսապաշտի հավատը մարդկանց ու «ամեղծվածային տիեզերքի միջև կենսական կապերի»³⁶ ցուցիչն է: Այսպիսով՝ Օդինի իրականությունն ու փաստականությունը, նրա հերոսականությունը կամ աստվածայնությունը գլխավորապես իրեն սնուցող **էթոսի** և վերջինիս հետ իր իսկ կենսական առնչության հիմնախնդիրն է³⁷: Քարլայլն Օդինին ներկայացնում է որպես «տիպիկ սկանդինավցու, լավագույն տևտոնի, որպիսին այդ ցեղը

համար անբարենպաստ» են, և որ «տեսակները աճելով կատարելության չեն հասնում [...]», տես **Ֆրիդրիխ Նիցշե**, Երկեր 5 հատորով, գերմ. թարգմ. **Հ. Մովսեսի**, Եր., «Անտարես», հատ. 5/1, 2019, էջ 126): Նմանապես և՛ հերոսականի դրսևորման քարլայլյան տիպերի պարագայում, որոնք ժամանակին համընթաց (խստով ասած) **պարզունականում են**, այն է՝ նախնադարում իբրև **աստվածություն** ընկալվող հերոսը 19-րդ դարում առաջավելն **գրողի** դերում կարող էր լինել:

31 Տես **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ lviii:

32 Տես On Heroes, էջ 22:

33 Նույն տեղում:

34 Տես **Robert A. Donovan**. "Carlyle and the Climate of Hero-Worship", էջ 127:

35 Օդինի պաշտամունքի ծագման ու ակունքների վերաբերյալ Քարլայլի կողմից քննության առնված երկու հակադիր տեսությունների մասին տես **Paul Barlow**. "The imagined hero as incarnate sign: Thomas Carlyle and the mythology of the 'national portrait' in Victorian Britain", in *Art History*, Vol. 17, No. 4 (December 1994), էջ 525:

36 On Heroes, էջ 4:

37 Տես **Robert A. Donovan**. "Carlyle and the Climate of Hero-Worship", էջ 127:

երբևէ ծնունդ է տվել»³⁸: Այստեղից էլ՝ հերոս Օդինի որակական հատկանիշները պարզորոշ արտացոլում են սկանդինավյան ժողովրդի բարոյական արժեքները: **Օդինը սկանդինավների հավաքական կատարելատիպն է, և Քարլայլը ձգտում է վերակենդանացնելու նրա առասպելական կերպարը:**

Այս առումով Օդինի կերպարի քննության քարլայլյան մոտեցումը փայլուն օրինակ է հեղափոխական այն հայեցակերպի, որը Ջոն Ս. Միլն (1806–1873) անվանում էր քոլրիջյան՝ ի տարբերություն բենթամյանի: Օդինի կերպարը Ջ. Բենթամն (1748–1832) անկասկած մրացածին և հեղինակաբար անարժանահավասար կհամարեր, մինչդեռ Քոլրիջի համար առաջնային ու կենսական էր «ո՞րն է դրա իմաստը» հարցադրումը: Ուստիև Քարլայլի դիպրանկյունից Օդինի աստվածայնության հանդեպ համարած հավասարի պարճառների քննությունն առավել հեղափոխական ու գործնական խնդրո առարկա է, քան այդ աստվածության գոյության փաստականությունը կամ վավերականությունը»³⁹:

Աներկբա է, որ Քարլայլն Օդինին շատ ավելին է համարում, քան նրա ապրած նախապատմական ժամանակների լոկ կրավորական արտացոլանքը, շատ ավելին, քան սոսկ ականավոր անհատ: Քանզի հերոս Օդինն իր դարաշրջանի **էթոսի** բյուրեղացումն է (ինչը Քարլայլն անվանում է **ազգային մտակերտվածք**), և նրա առաքինությունները ոչ նվազ իրական ու հիացմունքի արժանի են, քան 19-րդ դարի համամարդկային արժեքները, որոնցով հիանում էին բանախոսի ժամանակակիցները: Օդինն «**առաջին** սկանդինավն էր, որ մտածողության ինքնատիպ ներուժ ուներ, առաջին սկանդինավյան «հանձարը»⁴⁰ [...]: Նրա միջոցով գոյությունը պարզորոշ ու մեղեդային դարձավ. նա առաջինը կենդանագործեց Կյանքը»⁴¹:

Հատկանշական է, որ ամենից ակնառու նվաճումը, որ Քարլայլը վերագրում է Օդինին, ոչ թե ինչ–որ զինական սխրանք⁴² է, այլ **ռունների**՝ «սկանդինավյան այբուբենի»⁴³, պոեզիայի գյուտը, որոնց միջոցով Օդինն արտահայտեց այն իմաստությունը, որն անհողաբաշխորեն արդեն իսկ գոյություն ուներ մարդկանց մտքում: Արդ, **Օդինի քարլայլյան տիպարն իրականում երևակայական ու գեղարվեստական վերակազմություն է**, որի մեկնակետը սկանդինավյան մտակերտվածքի բնույթն է՝ ի հայտ բեր–

38 On Heroes, էջ 25:

39 Տե՛ս **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 128:

40 On Heroes, էջ 19:

41 Նույն տեղում, էջ 20:

42 Առավելապես շեշտելով Օդինի կերպարի մշակութային հենքը՝ Քարլայլն այդուհանդերձ կարևորում է նաև նրա «**խիզախություն**» (valour) հատկանիշը, քանզի Օդինն իր ժողովրդին քարոզում է «խիզախության անսահման կարևորությունը, թե ինչպես է մարդը դրա միջոցով աստված դառնում», իսկ «ճշմարիտ խիզախությունը, որ ընդհանուր ոչինչ չունի դաժանության հետ, ամենայն ինչի հիմքն է» (նույն տեղում, էջ 29): Ինչպես տեսնում ենք, «խիզախության» ներքո Քարլայլը բնավ բիրտ ուժի կիրառումը չէ, որ նկատի ունի: Հերոսականի այդ հատկանիշը, ըստ նրա, կարեկցանքի, գթության, «ճշմարտության և մարդու մեջ առկա ամենայն վեժմի ու բարու աղբյուրն է» (նույն տեղում, էջ 31):

43 Նույն տեղում, էջ 24:

ված **Էդդաների** առասպելական ու բանահյուսական նյութերում⁴⁴: Այսպիսով, ողջ բանախոսության ընթացքում **հերոս Օդինը հանդես է գալիս իբրև սկանդինավյան արժեքների ու հատկանիշների նախասկզբնական, պատճառական գործոն, այդ արժեքների հավաքական մարմնավորում**: Այս տեսանկյունից զարմանալի չէ, որ Քարլայլն ուղղակիորեն և գիտակցաբար շրջանցում է Օդինի **մարդեղության** կամ **պատմականության** հիմնախնդիրը. «[...] Եթե ինքնին Օդին մարդը համակ անհետացել է, [այդուհանդերձ] նրա վիթխարի սովերը տակավին տարածվում է իր ժողովրդի բովանդակ պատմության վրա⁴⁵: [...] Այն, ինչ Օդինը մտազննեց և ուսուցանեց իր ռուներով ու հանգերով, համայն տևտոն ժողովուրդն ընդունեց ի գիտություն և առաջ տարավ [այդ գործը]: **Նրա մտածելակերպը դարձավ նրանց մտածելակերպը**: [Մեր] նոր պայմաններում էլ ցարդ այսպիսին է յուրաքանչյուր մեծ մտածողի պատմությունը»⁴⁶:

Քարլայլի պատկերավոր բնորոշմամբ՝ «որոշ առումով **սկանդինավյան դիցաբանությունն Օդին մարդու դիմապատկերն է**»⁴⁷: Ուստի կարելի է փաստել, որ **այս բանախոսությունում Քարլայլի ուշադրության կիզակետում առավելապես հերոսապաշտն է, քան բուն հերոսը** (գի մեծապես կարևոր է, թե ինչպես է «ազգային մտակերտվածքն ընդունում»⁴⁸ տվյալ հերոսին), իսկ առավել ընդլայն թեման բնությունն է և կրոնական հավատի ծագումը:

Սկանդինավյան հեթանոսության իր ընտրությունը Քարլայլը բացատրում է ժամանակակից մարդու համար դրա «առավել հետաքրքրական» լինելու և հեթանոսական պաշտամունքի «վերջին շրջափուլը»⁴⁹ նշանավորելու հանգամանքով: Ըստ նրա՝ սկանդինավյան և ընդհանրապես հեթանոսական դիցաբանությունների բուն էությունը բնության աստվածայնության ճանաչումն է, «մարդու անկեղծ հաղորդությունը առեղծվածային ու անտեսանելի ուժերին», մի բան, որն առավել բնականորեն կյանքի է կոչված հենց «սկանդինավյան, քան [...] որևէ այլ դիցաբանության մեջ»⁵⁰: Ի լրումն սրա՝ տևտոնական դիցաբանությունն առավել «լավ պահպանվածներից»⁵¹ է: Մյուս կողմից՝ սկանդինավյան կրոնը, ըստ բանախոսի, մենք ևս անգիտակցաբար կրում ենք մեր մեջ, և եթե գիտակցաբար ճանաչենք այն, ապա առավել սերտ ու հստակ կլինեն նաև անցյալի հետ մեր առնչու-

44 Տե՛ս **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 129:
 45 Հայսմ Քարլայլը **հերոսականի** գաղափարը համարում է ամեն մի ժողովրդի պատմական առաքելության սահմանիցներից մեկը:
 46 On Heroes, էջ 26:
 47 Նույն տեղում, էջ 26, 30:
 48 Նույն տեղում, էջ 24:
 49 Նույն տեղում, էջ 15: Այս ընտրությունը կարող էր պայմանավորված լինել նաև Քարլայլի՝ սկանդինավյան դիցաբանության վերածննդի **հերդեղյան** կոչին անսալու իրողությամբ, տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 74:
 50 On Heroes, էջ 27:
 51 Նույն տեղում, էջ 15: Հետազոտողները մատնանշում են «Էրոսների մասին»-ում Քարլայլի՝ սկանդինավյան առասպելաբանության ներկայացման հուսալի գիտական հենքը, տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 74:

թյունները, զի «բովանդակ անցյալը ներկայի տիրույթն է»⁵²: Իր այս ընկալմամբ **Քարլայլը փաստորեն ցուցանում է նաև Օդինի՝ որպես վաղնջական հերոսի և ժամանակակից մարդու, արդի մտածողի կապը**, զի «յուրաքանչյուր ճշմարիտ մտածող ինչ-որ իմաստով Օդին է, որն ուսուցանում է մարդկանց իր մտածելակերպը, իր կերպարանքի ստվերը տարածում համաշխարհային պատմության շրջափուլերի վրա»⁵³:

Քարլայլը, սակայն, խորապես գիտակցում է հեթանոսական աշխարհայացքի **անհեթեթությունը**, որն ակնհայտ սնահավատություն է ժամանակակից մարդու պատկերացմամբ. «[...] Հարկավ, այդ հեթանոսությունը հույժ տարօրինակ է թվում, այս օրերում այն գրեթե անըմբռնելի է մեզ համար: Պատրանքների, թյուրիմացությունների, խաբկանքների ու անմտությունների շփոթեցուցիչ և խճճված մի թավուտ, որ ծածկում է բովանդակ կյանքի դաշտը»⁵⁴: Բայց և այնպես, հեթանոսությունը պատմական, փաստական իրողություն է. մարդիկ անկեղծորեն հավատում էին հեթանոս աստվածներին, այդ աշխարհընկալման կրողն էին, և Քարլայլը չէր կարող դյուրավ անտեսել այն ամենը, ինչին բազում մարդիկ հավատ էին ընծայում⁵⁵ և գործում ըստ այդմ: Ուստի նա դիտավորյալ հրաժարվում է ամեն տեսակ բանական բացատրությունից կամ տրամաբանական հիմնավորումից, որոնք կաղձատեն այդ առաջնային ճշմարտությունը: Նա քամահրաբար մերժում է ժամանակի գիտության մեջ տիրապետող այն վարկածը, թե նախապատմական կրոնը կարող էր քրմական դասի կանխամտածված, միտումնավոր խաբեության⁵⁶ արգասիքը լինել⁵⁷: Քարլայլի փաստարկը գործնական է. նրա համոզմամբ՝ դիցաբանությունը հետևողական ու կապակից **համակարգ** չէ, այլ բազմաշերտ, դյուրափոփոխ, կուտակային (accumulative) **զարգացում**⁵⁸: Հետևաբար **ամեն կրոնի (այդ թվում՝ հեթանոսության) ճշմարտացիությունը ոչ թե դրա ուսմունքի կամ վարդապետության բացարձակ և ապրիորի ճշմարտություն լինելն է, այլ տվյալ կրոնի հետևորդների անկեղծ հավատը**: Եվ քանի որ, ըստ Քարլայլի, **անկեղծությունն**⁵⁹ էլ լոկ ան-

52 On Heroes, էջ 36:

53 Նույն տեղում, էջ 30:

54 Նույն տեղում, էջ 5:

55 Հմմտ: «[...] Բոլոր առասպելները մի ժամանակ փիլիսոփայություններ էին, դրանց **հավատում էին**: Հնադարյան էպոսները, քանի դեռ դրանք **էպիկական** էին [...], ընկալվում էին որպես պատմություններ, իրապատում դեպքեր», տես **Thomas Carlyle**. “Biography” [1832], in *Essays on Literature*. Ed. **Fleming McClelland, Brent E. Kinser, and Chris R. Vanden Bossche**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 2020, էջ 135, այսուհետ՝ *Essays on Literature*:

56 Պաշտպանելով հեթանոսական դավանանքը խաբեության մեղադրանքից Քարլայլը վերստին հանգում է իր այն դիրքորոշմանը, որը նա ստանձնել էր ի պաշտպանություն հունական բազմաստվածության 1838 թ. գրականության պատմության մասին իր բանախոսական շարքում, տես **Thomas Carlyle**. *Lectures on the History of Literature*. Ed. by **R. P. Karkaria**. London and Bombay: Curwen, 1892, էջ 12:

57 Տես On Heroes, էջ 5-6:

58 Տես **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 79:

59 Հարկ է նշել, որ Քարլայլի **հերոսի** ու **հերոսականի** հոլացքների առանցքային հատկանիշներից մեկը **«անկեղծություն»**-ն (sincerity) է: Հենց միայն այս հատկանիշի բացակայության պարագայում Քարլայլը հրաժարվում է ճանաչել պականավոր անհատի հերոսականությունը: «Անկեղծություն» հերոսական որակի հանգամանակից քննությունը Քարլայլը ներկայացնում է «Հերոսն իբրև մարգարե» բանախոսությամբ:

կեղծությանը կարող է արձագանքել, ապա ոչ մի կրոն, որի հանդեպ անկեղծ հավատ են տածում, չի կարող դիտավորյալ խաբեության արդյունք լինել. «[...] Մենք պետք է հասկանանք, որ հեթանոսությունը երբեմնի իրականություն էր. ո՛չ բանաստեղծական այլաբանությունը և ո՛չ էլ, առավել ևս, կեղծիքն ու խաբեությունն են դրա ակունքը: Մարդիկ երբեք չէին հավատա սին տաղերին, երբեք չէին վտանգի իրենց հոգևոր կյանքը հանուն այլաբանությունների: Բոլոր ժամանակներում և հատկապես վաղ շրջանում մարդիկ օժտված էին խաբեբաներին հայտնաբերելու և նրանցից խորշելու բնագործով»⁶⁰: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Քարլայլն ուղղակիորեն բացառում էր **կեղծ-հերոսականի** դրսևորումը պատմության վաղնջական ժամանակներում՝ պայմանավորելով դա հերոսապաշտների՝ **կեղծ հերոսներին** անմիջապես ձանաչելու **իռացիոնալ** ունակությամբ, մի բան, ինչն աստիճանաբար դեպի անկում էր ընթանալու՝ հերոսականի մյուս տիպերի դրսևորմանը զուգընթաց:

Քարլայլն ընդդիմանում է նախապատմական կրոնների ծագման գիտական մեկ այլ՝ առավել հավանական մեկնությանը ևս, այն է՝ այդ կրոնները **այլաբանական** համակարգեր են, որոնցում վերացական ձյնարտությունները տեսանելի առարկաների խորհրդանիշերն են: Ըստ Քարլայլի՝ բուռն զգացումը, որը կրոնական հավատի իսկության ցուցիչն է, առավելապես կապված է տեսանելիի ու շոշափելիի, քան վերացականի հետ, հետևաբար «այլաբանությունն է հավատի արգասիքը և ոչ հակառակը»⁶¹, այլաբանությունը «հավատի լոկ ստվերն է»⁶²:

Քարլայլի այս բանախոսության գլխավոր ուղերձը հետևյալն է. կրոնական հավատն **ինքնակա** է, իսկ դրա բանական կամ մտավոր հենքը (եթե այդպիսին գոյություն ունի) **post factum** է: Արդ, ամենևին պատահական չէ, որ Քարլայլը տվյալ մարդու կրոնն ամենից «գլխավոր փաստն»⁶³ է համարում նրա մասին»⁶⁴: Սակայն, ինչպես երևում է, **կրոն** ասելով նա եկեղեցական պաշտոնական դավանանքը չէ, որ նկատի ունի, այլ «այն, ինչին մարդ **գործնականում հավատում է** [...], այն, ինչը հոգեհարազատ է նրան»⁶⁵:

Բանախոսական շարքի ամբողջական կառույցում առաջինի գործառույթը (ըստ էության՝ նաև երկրորդի) ոչ թե հերոսի պատմական կարևորությունն ու նշանակությունը սահմանելն է, այլ որոշակի տրամաբանա-

60 On Heroes, էջ 8:

61 Նույն տեղում, էջ 7:

62 Նույն տեղում:

63 1835 թ. մայիսի 13-ին **Ռ. Ու. Էմերսոնին** հղած նամակում Քարլայլը գրում է. «Մարդն **ապրում է** հավատով» (Letters, հ. 8, էջ 121): Ուշագրավ է ակոմոբերտսի դիտարկումը. «Բովանդակ «Էրոսների մասին»-ը այդ **գլխավոր փաստի** (կրոնի - Չ. Ճ.) մասին է» (Ruth apRoberts, նշվ. աշխ., էջ 74):

64 On Heroes, էջ 4:

65 Նույն տեղում:

կան ու իմացաբանական կանխադրույթներ ուրվագծելը, որոնցից թերևս կարևորագույնը **հերոսի կախվածությունն է հերոսապաշտության միջավայրից ու շրջակա աշխարհից**⁶⁶: Այստեղ ի հայտ է գալիս Քարլայլի **հերոսների տեսության** հիմնական գաղափարները, այն է՝ հերոսներն աշխարհ են գալիս մասամբ ի պատասխան ընթացիկ իրադարձությունների, բայց էլ ավելի՝ ի պատասխան այն մարդկանց ցանկությունների ու ձգտումների, որոնք նրանց մեծարողներն ու պաշտողներն են լինելու, **քանզի հերոսները չեն կարող գոյություն ունենալ առանց հերոսապաշտների**⁶⁷:

Այսպիսով, Օդինի հերոսական կերպարը Քարլայլի մեկնությամբ ներկայանում է ոչ թե իբրև **իրադարձություն կերտող** կամ **իդեալական իշխանության կրող**, այլ այդ իշխանության ու բարոյական կարգի անձնավորյալ սկզբունք, որն արտոնում ու արդարացնում է իշխանությունը: Անկախ այն բանից՝ գոյություն ունի՞ նա իրականում թե ոչ, Օդինը մարդկանց կարիքի ու խորագույն ցանկության պատկերն է և որպես այդպիսին՝ **հերոս-աստված**, որին պետք է երկրպագեն ու մեծարեն: Այլ կերպ ասած՝ **հերոսի իրական պատմական գոյությունը ստորադաս է նրա շուրջ ձևավորվող պաշտամունքին, ավելին՝ վերջինս կարող է գոյություն ունենալ նույնիսկ առանց պատմական կերպարի գոյության**:

Բոլոր հեթանոսական աստվածները համարվում են բնության ուժերի, բնական տարերքների մարմնավորումը: Օդինը ևս նույնացվում էր այդ ուժերի հետ, բայց և միաժամանակ նրան պաշտում էին իբրև ցեղի առաջնորդի, ռազմիկի, լուսավորչի, բանաստեղծի⁶⁸. «[...] Այդպիսի մարդուն մենք տակավին պատվում ենք, կոչում ենք նրան բանաստեղծ, հանձար և այլն: Սակայն այդ վայրի մարդկանց համար [Օդինն] իսկական մոգ էր [...], մարգարե, աստված⁶⁹: Մեկ անգամ արթնացած միտքն այլևս չի նիհիում, այն վերածում է մտածողության համակարգի, հարածում [...] սերնդեսերունդ, մինչև որ հասնում է իր լիակատար աճին, [որից հետո] այն այլևս ի զորու չէ աճելու և պետք է մյուսին զիջի իր տեղը»⁷⁰: Քարլայլի պատկերացմամբ՝ սկանդինավյան ժողովրդի համար հենց այսպիսին էին Օդին անունով մարդն ու սկանդինավյան գլխավոր աստվածությունը՝ **ուսուցիչ, հոգևոր առաջնորդ**, քանզի «հանապազ այդպիսին է ձջմարիտ **մեծն մարդը**»⁷¹, «անսահման արժանիքների տեր, որի հանդեպ հիացմունքը վերածում է

66 Տե՛ս Robert A. Donovan. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 131:

67 Տե՛ս նույն տեղում:

68 Ուշագրավ է Ալբերտ Ջ. Լավելլի դիտարկումը, համաձայն որի՝ հերոս Օդինը կանխադրում է մի կաղապար, որին պետք է համապատասխանեն հերոսականի մյուս բոլոր տիպերը, տե՛ս Albert J. LaValley. Carlyle and the Idea of the Modern: Studies in Carlyle's Prophetic Literature and Its Relation to Blake, Nietzsche, Marx, and Others. New Haven: Yale University Press, 1968, էջ 240:

69 Քարլայլն Օդինին անվանում է նաև մեծ **գյուտարար** (inventor), տե՛ս On Heroes, էջ 25:

70 Նույն տեղում, էջ 20: Նմանապես և հերոսականի դրսևորման տիպերը՝ հերոս-աստվածությունից սկսյալ:

71 Նույն տեղում, էջ 25:

պաշտամունքի»⁷²: Հերոս Օդիինը «մեծ մտածող է, **ինքնակա/ինքնատիպ** (original) մարդ, **տեսանող**, որի ձևակերպված ու արտահայտված միտքն արթնացնում է բոլորի նիրհող ունակությունները և մտածողության [մղում] նրանց: Հավետ այսպիսին է մտածողի, հոգևոր հերոսի կոչումը»⁷³: Արդ, Օդիինի հերոսական օրինակով Քարլայլը ձգտում է ցույց տալու, որ նրա պաշտամունքի մեջ ամփոփված է ոչ միայն կրոնի, այլև **եվրոպական ժողովուրդների հասարակական զարգացման պատմության ողջ հենքը**:

Ըստ Քարլայլի՝ յուրաքանչյուր կրոնի բուն էությունը հերոսների պաշտամունքն է (և ոչ աստծո): Այս դրույթը տեսականորեն հույժ երկինաստ է, քանզի այն արդեն **էվհեմերիզմի**⁷⁴ տարատեսակ է, ինչը կրոնական առասպելներում անցյալի արքաների, կառավարիչների ու հերոսների աստվածացում է ենթադրում: Սակայն բանախոսը կարծես անուղղակիորեն ամրագրում է, թե այնտեղ, **ուր գոյություն ունի հերոսների պաշտամունք, առկա է նաև կրոն**, թեկուզև չգիտակցված: Սրանով նա ընդլայնում է **կրոն** հասկացության իմաստը. «[...] Պաշտամունքը/երկրպագությունը անդրանցական զարմանք է, որ չի ձանաչում ոչ մի չափ ու սահման: Այս նախնադարյան մարդկանց համար բոլոր առարկաները և նրանց շուրջ գտնվող ամենայն ինչ աստվածայինի, որևէ աստծո խորհրդանիշ էր»⁷⁵:

Քարլայլը սրտառու է համարում հերոսականի դրսևորման այս նախասկզբնական ձևի՝ հերոս-աստծո կերպարը, վերջինիս մերձավորների՝ հերոսի այդպիսի «անբռնազբոս, անվարժ, բայց համակ սրտաբուխ ընդունելություն»-ն⁷⁶ ու պաշտամունքը: Այդ զգացումը նա համարում է ամենից ազնվագույնը: Ժամանակակից մարդը մեծ անհատներին այլևս աստվածներ չի կոչում և ոչ էլ անսահման հիանում նրանցով: Սակայն Քարլայլը համոզված է, որ «եթե մենք առհասարակ գուրկ լինեինք մեծն անհատներից կամ բնավ չհիանայինք նրանցով, ապա դա էլ ավելի վատթար կլիներ»⁷⁷: Այս առումով **նա կտրականապես մերժում է նաև հերոսների՝ «իրենց ժամանակի ծնունդը» լինելու տիրապետող ընկալումը՝ պատճառաբանելով իր այդ մերժումն այն ակնհայտ փաստով, որ եղել են ժամանակ-**

72 Նույն տեղում, էջ 20:

73 Նույն տեղում:

74 **էվհեմերիզմի** մեկնակերպն առավել հարմար էր **հերոսապաշտության** ուսմունքին, և Քարլայլն այն գերադասում էր այլաբանական մեկնությունից, տեսն On Heroes, էջ 233: Հասկացության անվանումը բխում է հին հույն փիլիսոփա, գրող **էվհեմերոս Մեսենացու** (թ. ա. IV-III դդ.) անունից, որն իր «Սրբազան պատմություն» երկում նկարագրում է իր երևակայական ճամփորդությունը դեպի Հնդկական օվկիանոսի մի կղզեխումբ, որի կղզիներից մեկի կենտրոնական հուշակոթողի՝ ոսկե սյան վրա արձանագրված էին Ուրանոսի, Կրոնոսի ու Ջևսի սխրանքները: Էվհեմերոսը եկավ այն համոզման, որ այս երեքը երբեմնի մեծ արքաներ էին և աստվածացվել էին իրենց մահից հետո, տեսն The Oxford Classical Dictionary. Ed. by N. G. L. Hammond and H. H. Scullard. Second Edition. Clarendon Press • Oxford, 1970, էջ 414-415:

75 Նույն տեղում, էջ 10:

76 Նույն տեղում, էջ 26:

77 Նույն տեղում:

ներ, երբ մարդիկ բարձրաձայն կանչել ու տենչացել են իրենց հերոսին, բայց նա չի հայտնվել⁷⁸:

Քարլայլը քաջ գիտակցում է, որ իր օրերում հերոսների պաշտամունքն իր դարն ապրած և պատմության թատերաբեմից անհետացած երևույթ է դիտվում⁷⁹: 19-րդ դարը, նրա համոզմամբ, մի դարաշրջան է, որը կարծես թե մերժում է **մեծն մարդկանց** գոյությունն ու բաղձալիությունը⁸⁰: Մյուս կողմից, սակայն, **հերոսապաշտությունն այսօր էլ գոյություն ունի, և այն չի դադարի կամ անհետանա, «քանի դեռ գոյություն ունի մարդը»**⁸¹: Ճշմարիտ հերոսների մեջ է Քարլայլը տեսնում տվյալ ժամանակի փրկությունը. «[...] Ոչ մի ժամանակի չէր վիճակվի դեպի խորտակում ընթանալ, եթե այն կարողանար **գտնել** բավականաչափ **մեծն մարդու**՝ իմաստուն և բարեմիտ: Իմաստնություն՝ հիրավի հասկանալու ժամանակի կարիքները, խիզախություն՝ ձիշտ ուղով տանելու այն. սրանք են յուրաքանչյուր ժամանակի փրկությունը»⁸², քանզի «համաշխարհային պատմության բոլոր շրջափուլերում **մեծն մարդը** իր դարաշրջանի անփոխարինելի փրկիչն է եղել [...]: **Աշխարհի պատմությունը մեծն մարդկանց կենսագրությունն է»**⁸³, և այդ պատմության ամեն մի դարաշրջանի **մեծագույն իրադարձությունը, որը մյուս բոլոր անցքերի ակունքն է, հերոսի հայտնությունն է**⁸⁴:

Պատմական հետազոտության տեսանկյունից Քարլայլի առաջին բանախոսության նորույթը մեր ժամանակներում արդեն հանրահայտ այն ձշմարտությունն է, որն այնժամ ուշադրության չառնվեց պատմաբանների կողմից, այն է՝ բանահյուսությունն ու բանավոր ավանդությունը նախապատմության քննության յուրատեսակ բանալիներ են⁸⁵: Միայն **Ջեյմս Ջ. Ֆրեյզերի** (1854–1941) «**Ոսկե ճյուղը**»-ի հրատարակությունից (1906–1915) հետո շատ մտածողներ գիտակցեցին այն, ինչը Քարլայլն անուղղակիորեն բացահայտել էր «Հերոսների մասին»-ի առաջին բանախոսությունում՝ **կարևորագույն առնչությունները բանահյուսության, առասպելի ու համեմատական կրոնագիտության**⁸⁶, գրականության ու կրոնի միջև⁸⁷:

78 Տե՛ս նույն տեղում, էջ 12:

79 Տե՛ս նույն տեղում:

80 Տե՛ս նույն տեղում:

81 Նույն տեղում:

82 Նույն տեղում, էջ 13:

83 Նույն տեղում:

84 Տե՛ս նույն տեղում, էջ 20:

85 Քարլայլի համոզմամբ բանահյուսության/առասպելաբանության մեջ առկա է **անհողաբաշխ, [համը] պոեզիա**, որը ևս պետք է իր ուրույն տեղը գտնի համաշխարհային պատմության մեջ: Որոշ առումով այն համաշխարհային պատմության նույնիսկ ամենակարևոր բաղադրիչն է [ռոմանտիկական պատմագրության տեսանկյունից], զի լոկ դրա միջոցով է, որ պատմաբանը կարող է հասու լինել հասարակ մարդկանց առտնին կյանքին, տե՛ս **Louise Merwin Young**. *Thomas Carlyle and the Art of History*. Philadelphia: University of Pennsylvania Press, 1939, էջ 61:

86 Տե՛ս **Owen Dudley Edwards**. «*The Tone of the Preacher*». Carlyle as Public Lecturer in *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*», էջ 208:

87 Տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 85-86: Քարլայլի առաջին բանախոսության վերաբերյալ ժամանակակիցների (և ոչ միայն) դրական ու բացասական արձագանքների և գնահատականների մասին տե՛ս նույն տեղում, էջ 82-86:

Այսպիսով, **Քարլայլի սույն բանախոսությունը նոր ուղի հարթեց և յուրատեսակ խթան հանդիսացավ սկանդինավյան հեթանոսության ու դիցաբանության առավել ամբողջական ուսումնասիրության և հետազոտական վերարժևորման համար**⁸⁸:

2. Հերոսն իբրև մարգարե: Մուհամմադ. իսլամ

Հերոսականի դրսևորման և հերոսապաշտության քարլայլյան աստիճանակարգում երկրորդը հերոս-մարգարեն է: Հարկ է նշել, որ «մարգարե»-ի ներքո Քարլայլը հազվադեպ է նկատի ունենում ապագան կանխատեսողի իմաստը և փոխարենը դա հասկանում է «**հինուխտյան** նշանակությամբ, այն է՝ Աստծով կամ ճշմարտությամբ **համակված**»⁸⁹: Այս մակարդակում հերոսն այլևս աստվածություն չի համարվում իր հայրենակիցների ու մերձավորների կողմից. հերոս-աստվածությունն «անդարձ անհետացել է»⁹⁰ պատմությունից: Քարլայլի համոզմամբ՝ աշխարհի պատմության մեջ երբեք այլևս չի լինի այնպիսի «մեծ անհատականություն, որին մարդկությունն իբրև աստծո կրնդունի»⁹¹:

1840 թ. իր մի նամակում Մուհամմադի մասին իր բանախոսությունը Քարլայլը լավագույնն էր համարում⁹² բանախոսական այս շարքի մեջ. «[...] Երեկ կարդացի իմ երկրորդ բանախոսությունն առավել մեծ լսարանի առջև, քան երբևէ և ամենայն հաջողությամբ կամ ավելին, քան ինձ անհրաժեշտ էր: Այն Մուհամմադի մասին էր: Իմ ունկնդիրների թվում էին Եպիսկոպոսներ և ամեն տեսակ մարդիկ: Ես նրանց հասկացրի, որ այդ հեգարաբն այնպիսի հատկանիշներ ունի, որ նրանց համար օգտակար կլինե՞ր ընդօրինակել [...]: Մարդիկ մեծապես ապշած ու գոհունակ էին թվում»⁹³: Ուստի լիովին տեղին է բանախոսի այն դիտարկումը, որ իր լսարանը «միանգամայն նոր մի բանի ունկնդիրն էր»⁹⁴: 19-րդ դարի բրիտանացի խոշոր աստվածաբան **Ֆրեդերիկ Գ. Մորիսի** (1805-1872) վկայությամբ՝ բանախոսությունն «[...] ամենից եռանդագինն ու հախուռն էր, որ երբևէ լսել էի նրանից: Դա Մուհամմադի կրքոտ պաշտպանություն էր ընդդեմ նրան առաջադրված բոլոր մեղադրանքների և համընդհանուր ներբողյան՝ ձոնված նրան ու նրա ուսմունքին»⁹⁵: Պատահական չէ, որ **Քարլայլի երկ-**

88 Տե՛ս նույն տեղում, էջ 75:

89 Նույն տեղում, էջ 96:

90 On Heroes, էջ 37:

91 Նույն տեղում:

92 Փոխարենը նա դժգոհ էր բանախոսության գրավոր՝ գրքային տարբերակից՝ համարելով այն «խղճուկ նյութ», տե՛ս Letters, h. 13, էջ 27:

93 Letters, հատ. 12, էջ 138:

94 James A. Froude. Thomas Carlyle: A History of His Life in London, 1834-1881. 2 vols. London, 1884, h. 1, էջ 181:

95 Frederick D. Maurice. The Life of Frederick Denison Maurice. Ed. Frederick Maurice. 2 vols. New York, 1884, հատ. 1, էջ 282:

րորդ բանախոսությունն անգլախոս աշխարհում հաճախ վկայաբերվում է որպես իսլամի և նրա մարգարեի դերի ու գործունեության վերաբերման մեկնարկ: Ինչպես Մ. Գոլդբերգն է պնդում, «[...] 19-րդ դարի երկրորդ կեսից ի վեր Մուհամմադին տրված պատմական գնահատականներում տեղի ունեցած հեղափոխությունը զգալի չափով պետք է վերագրվի Քարլայլի բանախոսության ազդեցությանը»⁹⁶:

Այս բանախոսությամբ է, որ Քարլայլն առաջին անգամ շոշափում է **հերոսների** իր տեսության մի շարք հիմնական գաղափարներ. «[...] Բոլոր ժամանակներում էլ դժվար է գիտենալ, թե **ինչ բան** է հերոսը կամ ինչպես կարելի է ճանաչել ու ընդունել նրան: **Դարաշրջանի պատմության կարևորագույն բնորոշիչն այն է, թե ինչպես է այն դիմավորում մեծ մարդուն:** Մարդկանց ձշմարիտ բնագոյներից ելնելով՝ միշտ էլ աստվածային ինչ-որ բան կա նրա մեջ: Արդյոք նրան աստված պետք է համարել, մարգարե՞, թե՞ որևէ այլ բան. մշտապես սա է գլխավոր հարցը, որին տրված պատասխանից էլ, որպես փոքրիկ պատուհանից, մենք կտեսնենք այդ մարդկանց հոգևոր կացության բուն էությունը: Քանզի, ըստ էության, **մեծ մարդը, որը բնության ծնունդ է, մշտապես համասեռ է.** Օդինը, Լուիսերը, Ջոնսոնը, Բրոնսը: Ես հույս ունեմ ցույց տալու, որ այս բոլորն **ի բնե միատարր են, և լոկ աշխարհի կողմից նրանց ճանաչման եղանակով ու նրանց ընդունած ձևերով է, որ նրանք այդպես անչափ տարբեր են**»⁹⁷:

Հերոսին կամ **մեծ մարդուն** Քարլայլն անվանում է նաև **ինքնատիպ (original) մարդ**, մի «պատգամաբեր՝ ուղարկված Անսահման Անհայտից [...]»: Մենք կարող ենք կոչել նրան բանաստեղծ, մարգարե, աստված. այսպես թե այնպես, բոլորս էլ զգում ենք, որ նրա արտաբերած խոսքը նման չէ որևէ այլ մարդու խոսքի: [...] Եվ մի՞թե դրանք յուրատեսակ «հայտնություն» չեն: [...] Նա գալիս է աշխարհի սրտից, մաս է կազմում իրերի նախասկզբնական իրականության: Աստված բազում հայտնություններ է արարել, բայց մի՞թե այս մարդուն ևս Աստված չի ստեղծել իբրև բոլոր հայտնություններից ամենից ուշը և ամենանորը: «Շունչ Ամենակալի է, որ ուսուցանե՞»⁹⁸ **նրան:** Մենք ամենից առաջ նրան պետք է լսենք»⁹⁹, քանզի նրա «[...] առաջին առանձնահատկությունը, որը մենք իրավամբ կարող ենք կոչել առաջինն ու վերջինը, նրա բովանդակ հերոսականության ալֆան և օմեգան, այն է, որ **իրերի երևութականության միջով նա թափանցում-տեսնում է բուն իրերը**»¹⁰⁰:

96 Michael K. Goldberg, *Introduction*, էջ xliii:

97 On Heroes, էջ 37-38:

98 Յովբ, ԼԲ:2:

99 On Heroes, էջ 40:

100 Նույն տեղում, էջ 48:

Քանի որ **մեծն մարդն իր ներքին էությանը անփոփոխական է**, ապա, ըստ Քարլայլի, վաղ ժամանակների հերոսների վերաբերյալ հետագա դարերի արձագանքները նույնպես կարող են կիրառվել՝ դատելու նրանց հոգևոր կացության մասին առավել ուշ շրջանում և որոշարկելու, թե արդյոք Սկանդինավիայից դեպի Արարիա այդ առաջընթացը շարունակվել է, թե ոչ¹⁰¹: Առհասարակ, առաջին երկու բանախոսությունների հերոսները՝ Օդինն ու Մուհամմադը, որոնց ուսմունքներն իրենց խորհրդավորությամբ ցնցող էին վիկտորյանական լսարանի համար, հնարավորություն ընձեռեցին Քարլայլին պարզաբանելու իր այն համոզմունքը, որ **ճշմարիտ կրոնական զգացումը հիմնված է հերոսապաշտության մշտակա իրողության և ոչ առասպելների արտաքին կազմության վրա**, որոնք իրենց բնույթով ենթակա են անընդհատական պատմական վերանայման¹⁰²: Հետևաբար Քարլայլի կողմից Մուհամմադի կերպարի ընտրությունն ու քննությունը ոչ թե ինքնանպատակ էին, այլ վիկտորյանական հասարակության կողմից հերոս-մարգարեի ընկալման շուրջ խորհրդածելու նպատակ էին հետապնդում¹⁰³: Սրանով Քարլայլը հակված էր ցույց տալու, որ Մուհամմադի վերաբերյալ իր հայրենակիցների կարծիքը խոսուն վկայությունն է այն բանի, որ նրանք շեղվել են ճշմարիտ հերոսապաշտության միջոցով առաջընթացի ուղին շարունակելու առաքելությունից¹⁰⁴: Վերոմեջբերյալ պարբերությունում արդեն նշմարվում են հերոսի ու հերոսապաշտի, հերոսի և նրա դարաշրջանի կապի, հերոսների բոլոր տիպերի ներքին էության միասեռության և հերոսականի տարակերպ դրսևորումների հիմնախնդիրները, զի **«հերոսների պաշտամունքը հարափոփոխ երևույթ է, տարբեր՝ ամեն մի դարաշրջանում»**¹⁰⁵, որը երկրորդ մակարդակում ի հայտ է գալիս **մարգարեի** կերպարանքով:

Ընդհանուր առմամբ, **«Հերոսների մասին»-ի հիմնականգմիկ և միավորիչ թեմաներից է մարգարեության հնարավորությունը 19-րդ դարում: Մուհամմադի՝ իբրև հերոս-մարգարեի միջոցով Քարլայլը հեթանոս էր սահմանելու 19-րդ դարի հավանական մարգարեի հարկանիշները, ուղերձն ու սոցիալական դերը**¹⁰⁶: Նա չափավոր լավարեսություն է հանդես բերում այս հարցում՝ հայացք նետելով Գյոթեի նվաճումներին: Եթե մարգարեի առաջնային հարկանիշը **«ներքին ասար-**

101 Տե՛ս **Albert D. Pionke**. "Beyond 'The Hero as Prophet': A Survey of Images of Islam", in *Literature and Belief*: Thomas Carlyle, 25:1&2, Brigham Young University Press, 2005, էջ 3:

102 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xl:

103 Տե՛ս **Albert D. Pionke**. "Beyond 'The Hero as Prophet': A Survey of Images of Islam", էջ 3:

104 Տե՛ս նույն տեղում:

105 On Heroes, էջ 38: Հերոսականի անընդհատության իր ըմբռնումը Քարլայլը զուգահեռում է մտքի անընդհատությանը. «Միտքը չի մեռնում, այլ լույս փոփոխվում է» (On Heroes, էջ 30), կամ «Ճշմարտության բուն էությունը երբեք չի մեռնում» (նույն տեղում, էջ 54): Հայտնի **հերոսականի դրսևորման կերպերը (աստվածություն, մարգարե, պոետ ևն) հարափոխ են, այնինչ հերոսականության բուն էությունը՝ հարակա:**

106 Տե՛ս **David J. DeLaura**. "Ishmael as Prophet: Heroes and Hero-Worship and the Self-Expressive Basis of Carlyle's Art", in *Texas Studies in Literature and Language: A Journal of the Humanities*. University of Texas Press. Vol. 11, No. 1 (Spring 1969), էջ 705:

վաճային առեղծվածի փրկանուն»–ն¹⁰⁷ է, ապա Գյոթեն մեծապես պարզաճում է հերոս–մարգարեի այդ դերին, քանզի նրա՝ որպես «ամենից ժամանակակից, վեհանձն ու բարձրակիր գրողի դիմակի»¹⁰⁸ ներքո Քարլայլը նշմարում է՝ նրա երկերը «հիրավի մարգարեություն են այս ամենից անմարգարեական ժամանակներում»¹⁰⁹: Եվ իսկապես, մարգարեության թեման հարկապես արդի ժամանակների հեղ առնչության համարեքսպում Քարլայլի վաղ հոդվածների, նախ և առաջ **«Բնութագրություններ»**–ի (*Characteristics*, 1831) գլխավոր խնդրո առարկան էր, որում հղում անելով ժամանակակից Գերմանիայի մեյրաֆիզիկային ու «բարձր գրականությամբ»¹¹⁰, նա ամրագրեց իր այն համոզմունքը, որ **«այս դարը ևս համակ գուրկ չէ իր մարգարեներից»**¹¹¹:

Մուհամմադի մասին իր նախնական գիտելիքները Քարլայլը քաղել էր **Էդվարդ Գիբբոնի** (1737–1794) **«Հռոմեական կայսրության անկման ու խորտակման պատմությունը»** կոթողային աշխատության (1776–1788) ընթերցումից 1816 թ.¹¹², որի 50–րդ գլուխը քննության է առնում Մուհամմադի պատմական կերպարը, վարդապետությունն ու պատմությունը, և իսլամի մարգարեի մասին իր դրական գնահատականներում Քարլայլն էապես հիմնվել էր այդ երկի վրա: Սակայն նրա կարևորագույն անմիջական աղբյուրը բուն **Ղուրանն** էր, որը Քարլայլը կարդում էր 1840 թ. փետրվարին՝ «մասամբ բանախոսելու նպատակով»¹¹³, և որի ընթերցանությունը նա ավարտեց իր բանախոսության մեկնարկից մեկուկես ամիս առաջ¹¹⁴:

Մուհամմադին որպես իր երկրորդ բանախոսության հերոս ընտրելը հույժ տարօրինակ էր Քարլայլի լսարանի համար, ուստի նա գիտակցում էր այդ հարցը բացատրելու անհրաժեշտությունը. «[...] Մենք ընտրել ենք Մուհամմադին ոչ թե որպես ամենաերևելի մարգարեի, այլ իբրև մեկի, որի մասին ամենից **ազատորեն** կարող ենք խոսել: Նա ամենևին էլ մարգարեներից ամենաձշմարիտը չէ, բայց ես նրան ձշմարիտ եմ համարում: Ավելին, քանի որ մեզնից որևէ մեկին մահմեդական դառնալու վտանգ չի սպառնում, ապա ես մտադիր եմ նրա մասին ամենայն բարին ասելու, ինչը որ իրավամբ կարող եմ անել»¹¹⁵: Մեկնաբանելով բանախոսության նախաբանի այս պատառիկը՝ Ալբերտ Գ. Պիոնկեն նկատում է, որ Մուհամմադը, որպես հերոս–մարգարե, «ոչ միայն զուտ օժանդակող դեր է կատարում» Քարլայլ–

107 On Heroes, էջ 136:

108 Սույն տեղում:

109 Սույն տեղում:

110 **Thomas Carlyle**. “Characteristics” [1831], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition. Ed. **H. D. Traill**. 30 vols. London: Chapman and Hall, 1896–1899, հատ. 28, էջ 41:

111 Սույն տեղում:

112 Տե՛ս **James A. Froude**, նշվ. աշխ., հ. 2, էջ 461: Քարլայլը բարձր էր գնահատում այդ երկում Մուհամմադի մասին գիբբոնյան պատումը՝ այն համարելով «հոյակապ պատառիկ», տե՛ս Letters, հատ. 2, էջ 330:

113 Letters, հատ. 12, էջ 64:

114 Քարլայլի երկրորդ բանախոսության ստույգ և հավանական աղբյուրների մասին տե՛ս On Heroes, էջ 257: Իսլամի և Մուհամմադի կերպարի վերաբերյալ իր հայացքներում Քարլայլի Գյոթեից անմիջական ազդեցության հարցի շուրջ տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 93–95:

115 On Heroes, էջ 38:

լի հերոսների աստիճանակարգում, այլև ներկայացվում է լոկ իբրև «**հարաբերականորեն ճշմարիտ մարգարե**, որն ըստ էության ունակ չէ փոփոխելու անգլիացիների մտածողությունն իր մարգարեական ունակության միջոցով: Այլ կերպ ասած՝ Մուհամմադը ոչ թե **Մեծն Մարդ** է, այլ ընդամենը **մեծն մարդ**»¹¹⁶: Հայսմ՝ հիմնվելով բանախոսության մեջ իսլամի հիմնադրի մասին միաժամանակ թե՛ դրական և թե՛ բացասական պնդումների վրա՝ կարելի է փաստել, որ Քարլայլը «լավագույն դեպքում **գործիքային** (instrumental) հետաքրքրություն է ցուցաբերում Մուհամմադի հանդեպ»¹¹⁷:

Բանախոսի՝ Մուհամմադին որպես հերոս ընտրելու վերաբերմամբ ուշագրավ են Ռոբերտ Ա. Դոնովանի հարցադրումն ու պատասխանը. «[...] Ինչո՞ւ Քարլայլը չէր կարող **ազատորեն** խոսել, օրինակ, Մովսեսից կամ Պողոս առաքյալից»¹¹⁸, իբրև հերոս-մարգարեների: Որովհետև նա ցանկանում է հավաստիանալ, որ «ինքն ու իր ունկնդիրները համերաշխ են առ այն, որ ո՛չ աստվածությունը (Օդին), ո՛չ էլ մարգարեն սովորական իմաստով չէ, որ ճշմարիտ են»¹¹⁹: Քարլայլը հակված էր ցույց տալու, որ «հավատը կարող է **ճշմարիտ** լինել նույնիսկ այն դեպքում, երբ դրա [բուն] առարկան **ստահող** է»¹²⁰: Նա շարունակում է պնդել, որ **մարդն ապրում է հավատով**¹²¹, և որ գիտությունն ու պատմությունն անլիարժեք են առանց դրա: Ավելին, նույնիսկ մեռյալ աստվածությունն ու «տարփասեր»¹²² մարգարեն կարող են հանդես գալ իբրև ոգեշունչ հավատի կրողներ, որը ճշմարիտ ու «կեցուցիչ»¹²³ (life-giving) է: Մյուս կողմից, սակայն, չպետք է կարծել, թե Քարլայլն առաջին երկու բանախոսություններով մտադիր էր հին հավատքի նոր հիմքեր հայտնաբերել, երբ հին հիմքերն արդեն իսկ կասկածի էին առնվում: Նա «ընդամենը պնդում էր հավատի անհրաժեշտության մասին **եթե ոչ առ աստվածներ, ապա գոնե առ մարդիկ**»¹²⁴: Ուստի կարևոր էր ընտրել այնպիսի կերպարների, որոնք «ոչ միայն դուրս էին հուդայաքրիստոնեական ավանդույթից», այլև հնարավորություն կրնձեռելին ցույց տալու, թե ինչու «դրանք չեն համապատասխանում հոգևորության այն իդեալին»¹²⁵ (տվյալ դեպքում՝ հերոսականի մարգարեական դրսևորմանը), որն ընդունելի կլիներ ժամանակակից մարդու համար:

116 Albert D. Pionke. "Beyond 'The Hero as Prophet': A Survey of Images of Islam", էջ 6:

117 Նույն տեղում, էջ 7:

118 Robert A. Donovan. "Carlyle and the Climate of Hero-Worship", էջ 130:

119 Նույն տեղում:

120 Նույն տեղում:

121 Առհասարակ, Քարլայլը հավատով էր պայմանավորում նաև ազգերի ու պետությունների ճակատագիրը.

«Ազգի պատմությունը բեղուն, հոգեսուն ու մեծ է, երբ ազգն սկսում է հավատալ» (On Heroes, էջ 66):

122 Նույն տեղում, էջ 64:

123 Նույն տեղում, էջ 66:

124 Robert A. Donovan. "Carlyle and the Climate of Hero-Worship", էջ 132:

125 Նույն տեղում, էջ 131:

Մուհամմադը պատկանում է Քարլայլի այն հերոսների թվին, որոնք վարկաբեկված էին պատմության կողմից¹²⁶, ուստի հեղինակի նպատակն էր իր բանախոսություններում վերակերտել նրանց դիմանկարները ճշմարիտ լույսի ներքո՝ գերծ նենգավոխումներից ու գրպարտիչների կեղծիքներից¹²⁷: Սա հանդուգն ձեռնարկ էր առ **ինտելեկտուալ պատմությունը**, քանզի Քարլայլը հետամուտ էր հերքելու իսլամի մարգարեի՝ իբրև **ինքնակոչի, գեղծարարի** և նույնիսկ **հակաքրիստոսի** մասին արևմտյան ավանդական պատկերացումը¹²⁸:

Տակավին 1838 թ. Քարլայլը հակիրճ անդրադարձել էր Մուհամմադին գրականության պատմության մասին իր բանախոսական շարքում, որում նա իսլամի մարգարեին ներկայացնում է գովեստի ու նախատինքի յուրատեսակ խառնուրդով: Քարլայլն այստեղ պնդում է, որ Մուհամմադը «ինքնակոչ չէր», այլ «խանդավառ մարդ, որն իր մտքի զորությամբ հասու էր դարձել ճշմարտության կայծին՝ մինչև 40 տարեկան հասակն ապրելով հանդարտ ու հասարակ կյանքով, որից հետո առաջ ընթացավ միանգամայն նոր ձանապարհով՝ խորապես վշտացած արաբական կռապաշտության զազրանքից և լի այն մեծ ճշմարտությամբ, որ Աստված մեկ է»¹²⁹: Մյուս կողմից, սակայն, Քարլայլը նկատում է, որ Մուհամմադն «այլ առումներով նսեմ, թշվառ մահկանացու է՝ լի ցանկապիրությամբ, ապականությամբ ու անուսությամբ, ինչպես երևում է արաբներին խոստացած նրա պարզկեններից, երբ նա իր ուսմունքն էր քարոզում նրանց»¹³⁰: Քարլայլի կենսագիրներից **Դեյվիդ Ա. Ուիլսոնի** (1864–1933) ենթադրությամբ՝ 1838 թ. բանախոսական շարքում Մուհամմադի կերպարի հանդեպ վիկտորյանական լսարանի անակնկալ արձագանքը կարող էր դրդել Քարլայլին անդրադառնալու իսլամին ու նրա մարգարեին նաև 1840 թ. «Հերոսների մասին» շարքում¹³¹, որում նա որոշակիորեն վերաձևակերպում է իր բացասական դիտարկումները. «[...] Մուհամմադի սխալները, թերությունները և նույնիսկ կեղծավորությունը, եթե այդպիսիք երբևէ հիմնավորապես ապացուցվել են»¹³², չեն կարող սասանել նրա հերոսականությունը, քանզի **մանրութներն ու մասնավորությունները չպետք է սքողեն հերոսականի բուն էությունը**¹³³. «[...] Վերին մարգարեության մասին Մուհամմադի գաղափարը հերյուրանքների, անպարկեշտությունների ու անհանդուրժո-

126 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xli:

127 Տե՛ս նույն տեղում:

128 Եվրոպայում տարբեր դարաշրջաններում իսլամի ընկալման տիպաբանական քննությունը տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 88-93:

129 **Thomas Carlyle**. *Lectures on the History of Literature*, էջ 107:

130 Նույն տեղում:

131 Տե՛ս **David A. Wilson**. *Carlyle on Cromwell and Others (1837-48)*. London: Kegan Paul, 1925, էջ 33:

132 *On Heroes*, էջ 40-41: Քարլայլը նկատում է, որ իսլամը հաջողել է Մուհամմադի վարդապետության մեջ գոյություն ունեցող **ճշմարտության** շնորհիվ, տե՛ս նույն տեղում, էջ 54:

133 Տե՛ս նույն տեղում, էջ 41:

ղության այնպիսի խառնաշփոթ առաջ բերեց, որ ներկա պահին տարակուսելի է դարձնում իմ ասելիքն առ այն, որ Մուհամմադը ճշմարիտ քարոզիչ էր և ոչ հավակնոտ խաբեբա, խեղաթյուրանք ու թվացյալություն»¹³⁴:

Այսպիսով, հակառակ մի շարք վերապահումների՝ Քարլայլն այդուհանդերձ ելույթ ունեցավ և հրապարակավ ազդարարեց իր համոզմունքը, «բովանդակ եվրոպական գրականության մեջ (միջնադարյան ու արդի) առաջին գորեղ հավաստիքն առ Մուհամմադի անկեղծության հանդեպ հավատը»¹³⁵: Ավելին, «թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում Քարլայլն առաջին մտածողն էր, որ փորձ արեց ըմբռնելու իսլամի հիմնադրի ներքին փորձառությունը: Եվրոպայում մյուսները Մուհամմադի գաղափարներում տեսել էին բոլոր ճշմարիտ կրոնների էության արտահայտությունը: Նույնիսկ Գյոթեի համար հետաքրքրական էին Մուհամմադի գլխավորապես պատմական նվաճումները: [Մինչդեռ] Քարլայլը միակն էր, որին հետաքրքրում էր Մուհամմադի անձը, մարդկային անհատականությունը, որ մաքառում էր ընդդեմ կյանքի ու ճակատագրի փորձությունների՝ ընդհանրական բոլոր մարդկանց համար»¹³⁶. այսպիսին է 20-րդ դարի բրիտանացի ականավոր արաբագետ Ուիլյամ Մոնթգոմերի Ուատի (1909–2006) գնահատականը Քարլայլի կերտած հերոս-մարգարեի կերպարին: Ուատը հավելում է նաև արտառոց մի դիտարկում, թե «մարգարեի կերպարը ներկայացնող Քարլայլի կտավում թերևս ավելի շատ Քարլայլն է ներկա, քան ինքը Մուհամմադը»¹³⁷: Բայց և այնպես, նրա հայեցակարգը [...] ճշմարիտ է և ընդհանուր առմամբ տակավին արժեքավոր մերօրյա պատմաբանի համար»¹³⁸: Արդի պատմագիտության մեջ Մուհամմադի կերպարի և իսլամի քարլայլյան վերլուծությանը տրված բարձր գնահատականները պայմանավորված են նաև ուշագրավ այն հանգամանքով, որ Քարլայլը բավականին ուշ էր անդրադարձել այդ թեմաներին և քննության առել դրանք առանց նեղմասնագիտական հնտությունների, բայց այդուամենայնիվ նրան հաջողվել էր որսալ ու պարզորոշ բանաձևել թեմայի հիմնարար դրույթները, որոնք վրիպել էին նրան նախորդած արիեստավարժ հետազոտողների աչքից: Սա ականերն վկայությունն է Քարլայլ-

134 Նույն տեղում, էջ 95:

135 William M. Watt. “Carlyle on Muhammad”, in *The Hibbert Journal* 53 (1954-55), էջ 247:

136 Նույն տեղում, էջ 253-254:

137 Հետազոտողները համակարծիք են առ այն, որ 19-րդ դարի յուրատեսակ հերոս-մարգարեի դերում Քարլայլն իրեն էր տեսնում (ժամանակակիցների կողմից Քարլայլի իբրև մարգարեի ընկալման մասին տես, օրինակ, Jules Paul Seigel, ed. Thomas Carlyle: The Critical Heritage. New York: Barnes, 1971, էջ 467, 481, 516): Դ. ԴեԼաուրան նշում է, որ «Հերոսների մասին»-ում մարգարեի կյանքի փորձառության կաղապարի և Քարլայլի կենսագրության ապշեցուցիչ զուգահեռը պատահական չէ՝ որպես դրա վկայություն բերելով նաև «Հերոսների մասին»-ի գրության շրջանում իր նամակներից մեկում Քարլայլի հետևյալ միտքը՝ «Ես փորձում եմ գրի առնել իմ բանախոսությունները ճաշի/քարոզի յուրատեսակ ոճով»: Ըստ ԴեԼաուրայի՝ ճաշի/քարոզի այս նոր շեշտադրումը ցայտուն ցուցիչ է Քարլայլի և հերոս-մարգարեի ենթագիտակցական նույնականության, տես David J. DeLaura. “Ishmael as Prophet: Heroes and Hero-Worship and the Self-Expressive Basis of Carlyle’s Art”, էջ 713, 715, առավել հանգամանորեն էջ 717-718:

138 William M. Watt. “Carlyle on Muhammad”, էջ 253-254:

լի **հերոսապաշտության** տեսությունից բխող առանցքային այն գաղափարի, որ **հերոսին կռահելու ու ճանաչելու համար հարկ է հերոսական ոգի ունենալ**:

Քարլայլն իր բանախոսությունը մեկնարկում է հղացական կառույցի ժամանակագրական բանաձևմամբ, այն է՝ **հերոս-մարգարեն հերոսապաշտության ոչ թե լոկ երկրորդ շրջափուլն է ազդանշում, այլ առաջընթացը սկանդինավյան հեթանոսության նկատմամբ**¹³⁹: Էականն այն է, որ այդ առաջընթացը պայմանավորված է ոչ թե ինքնին **մեծն մարդու** կերպարով, այլ այն դարաշրջանով ու պատմական միջավայրով, որում նա հանդես է գալիս: Ինչպես որ Օդինի ու սկանդինավյան հեթանոսության մասին բանախոսության միջոցով Քարլայլը քողարկու ներկայացնում է քրիստոնեության տարածման ու հաստատման ընթացքը, նմանապես և Մուհամմադի վերաբերյալ բանախոսությամբ միջնորդաբար փոխանցում է իսլամի իր համակրական պատումը քրիտանական հասարակությանը (որը գրեթե անհաղորդ է դրան)՝ միաժամանակ շարունակելով հերոսապատումը և ներկայացնելով պատմական զարգացման կաղապարները¹⁴⁰: Ուստի զուգահեռներ ու համեմատականներ տանելով մահմեդականության ու քրիստոնեության միջև՝ Քարլայլն ամրագրում է, որ իսլամը «քրիստոնեության **փնթոր** (confused) ձևն է. չլինել քրիստոնեությունը՝ չէր լինի և իսլամը [...]: Քրիստոնեությունը մեզ ևս հորդորում է ամենից առաջ **հնագանդվել** Աստծուն»¹⁴¹: Արդ, **ինչպես որ հերոսականի դրսևորման տարբեր ձևերն (աստված, մարգարե, բանաստեղծ, քահանա, գրող, արքա) են համասեռ, այդպես էլ բոլոր ճշմարիտ կրոններն ու ուսմունքները, ըստ Քարլայլի, իրենց էությանը նույնական են, և «ցանկացած կրոն կարող է հետևորդներ ձեռք բերել մարդկային սրտում նիրհող հերոսականն արթնացնելու միջոցով**»¹⁴²:

Երկու կրոնների համեմատության մեկ այլ ուշագրավ դրվագ է դրանց տարածման եղանակների վերաբերյալ Քարլայլի դիտարկումը: Ըստ նրա՝ թեպետ Մուհամմադը սրով է տարածել իր կրոնը¹⁴³, իսկ քրիստոնեությունը

139 Տե՛ս On Heroes, էջ 37:

140 Տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 97:

141 On Heroes, էջ 49:

142 Նույն տեղում, էջ 61:

143 Ուշագրավ է Քարլայլի հետևյալ դիտարկումը. «Բեդվինների հետ կենաց-մահու պատերազմում անհնարին էր խոյս տալ դաժանություններից: Բայց և ողորմածության, ազնիվ, բնական կարեկցանքի ու վեհամծնության դրսևորումների պակաս էլ չէր զգացվում: [...] Երկուսն էլ [Մուհամմադի] սրտի ազատ թելադրանքից էին բխում [...]: Հարկ եղած դեպքում նրա մեջ ազնիվ դաժանություն է ի հայտ գալիս [...]» (On Heroes, էջ 62): «**Ազնիվ դաժանություն**» պատկերավոր բնորոշմամբ Քարլայլն ըստ էության արդարացնում է հերոսի նույնիսկ բիրտ ուժի կիրառումը ի տեղի և ժամանակի: ԱփՈղբերստի կարծիքով Քարլայլն այստեղ ակնարկում է **Ուժի և Իրավունքի** փոխառնչության իր հայտնի հղացքը, սակայն ոչ այնքան բռնի ուժի կիրառման, որքան **դարվինյան** իմաստով հավաստելու **իրավունքի** գերակայությունն իբրև ամենից կենսունակը, տե՛ս **Ruth apRoberts**, նշվ. աշխ., էջ 99: Նույն պատճառաբանությամբ էլ Քարլայլն արդարացնելու էր **Օլիվեր Քրոնվելի** իռլանդական արշավանքն ու կոտորածները (1649-1653): Այս և նման մի շարք արտահայտությունների հիմամբ է, որ հետագայի շատ հետազոտողներ ու մտածողներ Քարլայլին մեղադրեցին ուժի կիրառման ջատագովության մեջ:

տարածվել է առավել ազնիվ ու խաղաղ եղանակներով՝ քարոզով ու համոզությամբ, այդուհանդերձ արմատական «սխալ կլիխի այդ հանգամանքը որևէ կրոնի ճշմարտացիության կամ ստահողության փաստարկ համարելը»¹⁴⁴: Ավելին, Քարլայլն ընդունելի է համարում, որ ճշմարիտ վարդապետությունը, միտքն ու գաղափարը պետք է տարածվեն բոլոր հնարավոր միջոցներով՝ լեզվով, սրով և ցանկացած այլ գործիքակազմով, քանզի «**ինչը արժանի չէ նվաճված լինելու, երբեք չի նվաճվի**», և «այս մեծ մենամարտում իրավարարն ինքնին բնությունն է, որը չի կարող անարդար լինել»¹⁴⁵:

Մուհամմադի և իսլամի վերաբերյալ իր հայրենակիցների հայացքները **նորոգելու** և մարգարեի հերոսականությունը փաստարկելու համար Քարլայլը մի քանի հետտորական հնարքներ է բանեցնում: Դիմելով ի մասնավորի պատմության, վիճակագրության և աստվածաբանության հեղինակությանը՝ նա հղում է Մուհամմադի դավանանքի անվիճելի տեսականությանն ու ժողովրդականությանը՝ այդպիսով հակազդելու վիկտորյանական կրոնական նախապաշարումներին¹⁴⁶: Միևնույն ժամանակ, բանախոսը հաճախ գործածում է նաև պատկերավոր արտահայտություններ ու համեմատություններ՝ ենթագիտակցորեն կրճատելու Անգլիայի ու իսլամական աշխարհի միջև հեռավորությունը: Ինչպես դիպուկ նկատում է Մուհամմադ Ա. Ալ-Դամին, «Քարլայլը շրջելի է դարձնում **աշխարհագրական պատճառականության** (դետերմինիզմ) գերակա տեսությունները՝ արաբների բնորոշելով իբրև **Արևելքի խալացիներ**»¹⁴⁷:

Փորձելով քննության առնել ընթացիկ նախապաշարումները՝ Քարլայլը հույս ուներ վճռականորեն ի չիք դարձնելու այն անհեթեթ հայեցակետերը, որոնց համաձայն՝ ուսմունքները, որ «կյանքի ուղեցույց» էին միլիոնավոր մարդկանց համար և որոնք «ապրել ու զոհվել էին հանուն այդ ուսմունքների», լուրջ «խղճուկ կրոնական աճպարարություն»¹⁴⁸ են: Մոնթգոմերի Ուատը նկատում է, որ իսլամի՝ որպես կանխամտածված կրոնական խաբեության վերաբերյալ 18-19-րդ դարերում իշխող տեսակետը եվրոպական արևելագիտության մեջ սկսեց ավելի ու ավելի քննադատվել այդ տեսակետի դեմ հենց Քարլայլի վճռական գրոհներից հետո¹⁴⁹: Վարկածը, թե Մուհամմադը «[...] կեղծիքի մարմնավորում էր, թե նրա կրոնը լուրջ ստի ու անստության կույտ էր»¹⁵⁰, ողջամիտ ու տրամաբանական չէ Քարլայլի հա-

144 On Heroes, էջ 53:

145 Սույն տեղում:

146 Տե՛ս **Albert D. Pionke**. “Beyond ‘The Hero as Prophet’: A Survey of Images of Islam”, էջ 4:

147 **Muhammed A. Al-Da’mi**. Arabian Mirrors and Western Soothsayers: Nineteenth-Century Literary Approaches to Arab Islamic History. Comparative Cultures and Literatures. Vol. 17. New York: Peter Lang, 2002, էջ 72:

148 On Heroes, էջ 39:

149 Տե՛ս **William M. Watt**. Muhammad at Medina. Oxford: Clarendon Press, էջ 325:

150 On Heroes, էջ 38:

մար, թեև այդօրինակ հայացքները տակավին տիրապետող էին նրա ժամանակի ընկալումներում: Ավելին, 19-րդ դարում իսլամի մարգարեի մասին այդօրինակ հայացքները Քարլայլն անգամ անպատվաբեր ու ամոթալի էր համարում ժամանակակից մարդու համար¹⁵¹. «[...] Դրանք խղճուկ տեսություններ են: Եթե մենք կամենում ենք ինչ-որ բանի հասու լինել Աստծո ճշմարիտ արարչության մեջ, եկեք համակ դադարենք հավատալ այդ տեսություններին: Դրանք **Թերահավատության դարի** արգասիք են, որոնք մարդկային հոգու [...]՝ ամենից ցավալի հոգևոր կաթվածի վկայությունն են: Ըստ իս՝ առավել սրբապիղծ տեսություն չի տարփողվել այս Երկրի վրա: Ինչպե՛ս կարող էր կեղծավոր մարդը կրոնի հիմնադիր լինել»¹⁵²: Այստեղ, ահա, Քարլայլը հանգամանորեն ներկայացնում է **հերոսականի** հիմնարար որակներից մեկը՝ **անկեղծությունը**. «[...] **Անկեղծությունը, խորունկ, մեծ, վավեր անկեղծությունն է բոլոր հերոսական անձանց առաջին հատկանիշը**»¹⁵³: Ուշագրավ է, սակայն, հերոսի անկեղծության քարլայլյան ըմբռնումը: Ըստ նրա՝ **հերոսը չի գիտակցում իր անկեղծությունը, հաղորդ չէ դրան, ավելին՝ հերոսի «անկեղծությունը կախված չէ իրենից. նա չի կարող անկեղծ չլինել**»¹⁵⁴: Այստեղից էլ բանախոսի այն պատկերավոր բանաձևը, որ **հերոսն առեղծված է նաև ինքն իր համար**¹⁵⁵, և **անհնարին է լիովին ճանաչել ու բացահայտել նրան**:

Ինչպես որ վաղ արդի դարաշրջանի քարլայլյան բոլոր հերոսները, Մուհամմադի մտքի զորությունն ու նպատակը բխում են նրա այն հավատամքից, որ «մենք պետք է **հնազանդվենք** Աստծուն»¹⁵⁶, որը ամենայն իրավունքի ու բարոյականության աղբյուրն է¹⁵⁷: Սակայն Մուհամմադի համար **հնազանդության** միջոցով այդ **ինքնահրաժարումն** ու **ինքնաժխտումը**¹⁵⁸ ոչ մի կերպ մտավոր անձնատվության ցուցիչներ չեն: Ընդհակառակը, հնազանդությունն առաջին քայլն է դեպի ազատություն, որը «կարելի է վաստակել հավատով ու բարեվարքությամբ (welldoing), հերոսական արարքով և աստվածատուր համբերությամբ, որն է՛լ ավելի հերոսական բան է»¹⁵⁹: Խոսելով իսլամական դավանանքում Աստծուն **հնազանդվելու** պատգամի մասին՝ Քարլայլը գրում է, որ «մեր ողջ ներուժը Նրա հանդեպ խոնարհի հնազանդությունն է, ինչ էլ որ Նա անի մեզ հետ թե՛ այս

151 Տե՛ս նույն տեղում:

152 Նույն տեղում, էջ 39:

153 Նույն տեղում:

154 Նույն տեղում, էջ 40:

155 Նույն բնորոշումը Քարլայլը տալիս է նաև Օդինին (տե՛ս On Heroes, էջ 23) և գրեթե իր բոլոր հերոսներին:

156 Նույն տեղում, էջ 49:

157 Տե՛ս David R. Sorensen, *Introduction*, էջ 10:

158 Այս հասկացությունները, հերոսականի էական հատկանիշներ լինելուց գատ, Քարլայլի բարոյական փիլիսոփայության առանցքային հղացքներից են, որ սերտ աղերսներ ունեն Նովալիսի *Selbstötung*-ի և Գյոթեի *Enstagen*-ի հետ, հանգամանորեն տե՛ս Charles F. Harrold. *Carlyle and German Thought: 1819-1834*. Hamden • London: Archon Books, 1963, էջ 207, 214-230:

159 On Heroes, էջ 65:

աշխարհում, թե՛ մյուսում: Այն, ինչ Նա տալիս է մեզ, լինի մահ, թե մահից վատթար բան, պետք է ընդունենք որպես բարիք, որպես լավագույնը: Մենք անձնատուր ենք լինում Աստծո կամքին: – «Եթե սա է **խլամը**», – ասում է Գյոթեն, – «մի՞թե բոլորս **խլամի** մեջ չենք ապրում»: Այո, մեզանից բոլոր նրանք, ովքեր որևէ բարոյական կյանք են վարում, հենց այդպես են ապրում: [...] Մարդու դերն [այս աշխարհում] Ամբողջի օրենքին ենթարկվելն ու աստվածավախ լռությամբ դրան հետևելն է՝ չվիճարկելով այն և ենթարկվելով դրան իբրև անվիճելիին»¹⁶⁰:

Քարլայլն իսլամը համարում էր սկանդինավյան հեթանոսության շարունակությունը, «հիրավի երկնային տարրի»¹⁶¹ հավելմամբ մի «յուրատեսակ քրիստոնեություն»¹⁶², ավելին՝ «իր թերաբժեք քրիստոնեությամբ Մուհամմադն ավելի լավ քրիստոնյա է, քան մեզանից շատերը»¹⁶³: Սկանդինավյան դիցաբանությունից ու քրիստոնեությունից իսլամի **քարլայլյան տարբերակը** մտքի և հոգու այնպիսի ներուժ էր ժառանգել, որը շահեկանորեն հակադրվում էր բենթամյան **օգտապաշտությանը**¹⁶⁴, ինչն էլ բնախոսության առանցքային նպատակներից էր: Մուհամմադին առընթեր՝ Բենթամը հանդես է գալիս որպես «ներկայի հոգևոր սնանկության պատեհ խորհրդանիշ»¹⁶⁵: Խորունկ դիտարկում է անում այս առումով Ա. Պիոնկեն՝ Քարլայլի Բենթամ-Մուհամմադ ուշագրավ հակադրությունը ներկայացնելով իբրև յուրատեսակ ոճական հնարք. «[...] Հաճախ Քարլայլն իբրև օրինակ է բերում այնպիսի նշանակյալների, որ համաբանության սկզբունքով մատնացույց անի քրիստոնեական մշակույթի թերությունները: Համաբանական այս գույգերը արաբախալամական աշխարհը սովորաբար (բայց ոչ մշտապես) դրական լույսի ներքո են ներկայացնում՝ ի համեմատ բրիտանական հասարակության»¹⁶⁶: Նմանատիպ օրինակներով Քարլայլն առաջադրում է «իսլամական մշակույթի մի հայեցակերպ, որն արժանի է ընդօրինակման Անգլիայի կողմից, որի սրբազան ու բարոյական բնագոյները

160 Նույն տեղում, էջ 49: Քարլայլն այստեղ քողարկու ակնարկում է հերոսին ու հերոսականին անվերապահ հնազանդության անհրաժեշտությունը:

161 Նույն տեղում, էջ 65:

162 Նույն տեղում:

163 Letters, հատ. 12, էջ 183: Այս առումով խոսելով նաև Ղուրանի մասին՝ Քարլայլն ուղղակիորեն խայթում է նկատելով, որ մահմեդականները մեծ ակնածանքով են վերաբերվում Ղուրանին, մինչդեռ քրիստոնյաներից քչերն են, որ այդպես են վերաբերվում իրենց Մուրբ Գրքին, տես On Heroes, էջ 55: Մեկ այլ առիթով «Արաբները հավատում էին իրենց կրոնին և փորձում ապրել դրանով: Վաղ դարերից ի վեր, թերևս բացառությամբ արդի ժամանակների անգլիացի պուրիտանների քրիստոնյաները երբևէ այնքան հավատարիմ չեն եղել իրենց դավանանքին, որքան մահմեդականները [...]» (On Heroes, էջ 66): Հակառակ բանախոսության ընթացքում այս հաճախադեպ հանդուգն ու սարդիչ տոնին՝ **Շեքրի Քրաբ Ռոբինսոնի** (1775-1867) օրագրային վկայությունը փաստում է, որ «բանախոսությունը մեծ բավականություն պատճառեց, քանզի դրանում արտառոց մտքեր կային, և այն մատուցեց անսովոր եռանդով», տես **Henry Crabb Robinson. Diary, Reminiscences, and Correspondence of Henry Crabb Robinson, Barrister-at-Law, F. S. A. Ed. Thomas Sadler.** 2 vols. Boston, 1871, հատ. 2, էջ 287:

164 Տես **David R. Sorensen, Introduction**, էջ 10:

165 Նույն տեղում, նաև: On Heroes, էջ 65: Բենջամին Հ. Լեմանը ևս հատկանշում է Քարլայլի՝ Բենթամին ուղղված աստիկ պարսավանքը Մուհամմադի մասին բանախոսությունում, տես **Benjamin H. Lehmann. Carlyle's Theory of the Hero: Its Sources, Development, History, and Influence on Carlyle's Work: A Study of a Nineteenth Century Idea.** Durham, N.C.: Duke University Press, 1928, էջ 60:

166 **Albert D. Pionke.** “Beyond ‘The Hero as Prophet’: A Survey of Images of Islam”, էջ 10:

ցավալիորեն ապականվել ու գռեհկացել են»¹⁶⁷: **Համանման հնարքներով բանախոսը շարունակ շեշտադրում է անցյալում հերոսականի վառ դրսևորումը և ներկայում դրա թշվառ դրությունը:**

Անդրադառնալով Մուհամմադի դարաշրջանում հերոսապաշտության միջավայրին ու արաբների մի շարք դրական հատկանիշներին՝ Քարլայլը հատկապես առանձնացնում է նրանց **հրեական հատկանիշը՝ կրոնակա-նությունը**, որը «բազում կամ բոլոր բարձր հատկությունների արգասիքն է»¹⁶⁸: Մարդկային բարձր որակներ կրող արաբները, բանախոսի համոզմամբ, դարեր շարունակ անգիտակցաբար սպասում էին իրենց հերոսի հայտնությանը՝ ի վերջո մուտք գործելու համաշխարհային պատմություն, «խավարից դեպի լույսը»¹⁶⁹ գալու: **Մուհամմադի հերոսականությունը Քարլայլը մեծապես պայմանավորում է արաբների պատմականացման, պատմական ժամանակի մեջ իրենց տեղը գտնելու և ազգաշինության ստեղծարար դեր ստանձնելու հարցում նրա աննախադեպ խթանով:**

Այս բանախոսությամբ Քարլայլն ուրվագծում է նաև իր տեսության համատեքստում հերոսի **արտաքին հաջողության** զանցառումը և նույնիսկ քամահրական վերաբերմունքը դրա հանդեպ: Կայացած մարգարեի նրա բնորոշումն ավելի քան խոստն է. «Միայնակ և թափառ, կտրված հասարակությունից և գուրկ համակիր լսարանից, սակայն անդուլ պայքարի մեջ՝ ըմբռնելու աստվածայինն ու դրա պատշաճ արտահայտչաձևները»¹⁷⁰, քանզի **որքան ազնիվ ու վեհանձն են հերոսները, այնքան ծանր է նրանց ճակատագիրը և դժվարին՝ նրանց անցնելիք ճանապարհը**. ահա սա է **հերոս-մարգարեի այն մտակաղապարը, որ Քարլայլը քննության է առնում «Հերոսն իբրև մարգարե» բանախոսությունում**¹⁷¹: Գրեթե նույն դիտանկյունից նա միաժամանակ ուշադրության է առնում նաև Մուհամմադի կրթության պարագան՝ փաստելով, որ արդի իմաստով նա դպրոցական կրթություն անգամ չէր ստացել: Մուհամմադի ողջ իմաստնությունը, ըստ Քարլայլի, նրա անապատական կյանքի և բազում հոգևոր փորձությունների արդյունք էր¹⁷²:

Իսլամի մարգարեի հերոսականության քարլայլյան մեկ այլ վկայություն է այն հանգամանքը, որ Մուհամմադն իր աստվածային առաքելությունից սկսեց խոսել և քարոզել հասուն տարիքում միայն, իսկ մինչ այդ նա ապրում էր անխռով կյանքով, վայելում «դրկիցների բարի վերաբերմունքը»¹⁷³: Այս պատկերավոր արտահայտություններով բանախոսը ցույց է տալիս, որ հա-

167 Սույն տեղում, էջ 11:

168 On Heroes, էջ 42:

169 Սույն տեղում, էջ 66:

170 David J. DeLaura. "Ishmael as Prophet: Heroes and Hero-Worship and the Self-Expressive Basis of Carlyle's Art", էջ 707:

171 Տե՛ս նույն տեղում:

172 Տե՛ս On Heroes, էջ 45-46:

173 Սույն տեղում, էջ 47:

ռաջացած հասակում Մուհամմադը չէր կարող այդչափ հավակնոտ լինել և Աստծո մարգարեի դերին հավակնել, եթե այդ ամենը լոկ կեղծուպատիր և շինծու լիներ: Սրանով Քարլայլը վերստին հակադրվում էր իսլամի հիմնադրի մասին եվրոպական համատարած ընկալումներին:

Խոսելով Մուհամմադի բազում դրական հատկանիշներից՝ բանախոսը հերթական անգամ արձանագրում է հերոսականության իր ուսմունքի առանցքային տարրերից մեկը՝ նկատելով, որ այդ դրակներով **Մուհամմադը կարող էր աշխարհ գալ նաև որպես «բանաստեղծ, արքա, քահանա, հերոսի ցանկացած տեսակ»**¹⁷⁴: Այստեղից էլ՝ **հերոսների շրջելիության** ինքնատիպ գաղափարը, քանզի, ինչպես վերը նկատեցինք, Քարլայլի կուռ համոզմամբ **հերոսներն իրենց ներքին էությանը նույնական են, համասեռ, միատարր**: Ուստի միանգամայն օրինաչափ է, երբ **Քարլայլն իսլամի մարգարեին դիտարկում է նաև որպես հերոս-արքա՝ նկատելով, որ թագակիր և ոչ մի կայսեր այնպես չեն հպատակվել, ինչպես Մուհամմադին**¹⁷⁵:

Այսպիսով՝ Մուհամմադի (ինչպես նաև Օլիվեր Քրոմվելի) բանախոսական դիմանկարում Քարլայլը լիովին հաջողեց իր նվիրական նպատակի իրագործումը, այն է՝ վերջ դնել իսլամի և Մուհամմադի մասին իր ժամանակի կանխակալ հայացքներին՝ էապես կրոնական դիրքորոշում ստանձնելով խնդրո առարկայի հետազոտության հարցում¹⁷⁶:

Քննության առնելով Քարլայլի բանախոսությունն արդի գիտական դիտանկյունից՝ Մուհամմադ Ա. Ալ-Դամին գրում է, որ «արևմտյան թյուրքմբուններին տիրապետող մտայնության պայմաններում դրա կարևորությունը բխում է այն փաստից, որ այն մեծ գրական վաստակի հազվագյուտ փաստաթուղթ է, որում փորձ է արվում վերարժևորելու արմատավորված դիրքորոշումները»¹⁷⁷: **Քոստուրթ Ռ. Սմիթի (1839-1908) վկայությամբ՝ 19-րդ դարի ընթերցողների մեծ մասը Մուհամմադի մասին դրական պատկերացում էր կազմել ոչ թե Գիբբոնի, այլ Քարլայլի միջոցով**¹⁷⁸: Սմիթը նաև հատկանշում է իր սերնդի համար այն ցնցող անակնկալը, որ Քարլայլը հերոս-մարգարեի դերում ոչ թե Մովսեսին, Եղիային կամ Եսայուն էր ընտրել, այլ հենց Մուհամմադին¹⁷⁹:

174 Նույն տեղում, էջ 59:

175 Տե՛ս նույն տեղում, էջ 61:

176 Տե՛ս Michael K. Goldberg, *Introduction*, էջ lxxix:

177 Իսլամի մասին եվրոպական ընկալումների թարմացման հարցում Քարլայլի դերակատարության մասին տե՛ս, օրինակ, Paul E. Kerry. "The Outsider at the Gates of Victorian Society: Thomas Carlyle's *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*", in *The Image of the Outsider in Literature, Media, and Society*. Ed. Will Wright and Steven Kaplan. Pueblo: University of Southern Colorado Press, 2002, էջ 369-73; Edward W. Said. *Orientalism*. New York: Vintage Books • A Division of Random House, 1979, էջ 152; Ouiza Amziani, Zerar Sabrina. "Re-Evaluation of Prophet Mohammed's Image in Victorian Literature", in *Majallat al-Mumārāsāt al-Lughawīyah*, 2013, Issue 20, էջ 17-26:

178 Տե՛ս Bosworth R. Smith. *Mohammed, and Mohammedanism: Lectures Delivered at the Royal Institution of Great Britain in February and March, 1874*. New York: Harper & Brothers, 1875, էջ 87:

179 Տե՛ս նույն տեղում:

Նախորդ դարի երևելի արևելագետներից **Օուեն Լաթինորը** (1900–1989) Քարլայլի այս բանախոսությունը բարձր է գնահատում նախ և առաջ այն հիմամբ, որ այն «դրդեց եվրոպական լսարանին հայացք նետելու իր մայրցամաքային սահմաններից անդին և **հերոսներ նշմարելու նաև ասիական քաղաքակրթության ծիրում**»¹⁸⁰:

Ինչպես գիտենք, Քարլայլի «Հերոսների մասին»-ը հաճախ «դատապարտվել է որպես ռասիստական ու մերձֆաշիստական աշխատություն, սակայն երկրորդ բանախոսությունն էր, որ ուղի հարթեց, օրինակ, արևմտաեվրոպական մտահոգևոր միջավայրում իսլամի հանդեպ ռասիզմի մերժման համար»¹⁸¹: Հետևաբար այս բանախոսությամբ Քարլայլը մտադիր էր վերականգնելու պատմական արդարությունը Մուհամմադի կերպարի և իսլամի վերագնահատման հարցում: **Ռիչարդ Գարնեթի** (1835–1906) պատկերավոր բնորոշմամբ՝ «Քարլայլի այդ բանախոսությունից ի վեր ոչ ոք այլևս քար չի նետել Մուհամմադի կողմը»¹⁸²:

Ռ. ափոփոքերտսի համոզմամբ՝ իսլամի հերոս-հիմնադրի և մահմեդականության վերաբերյալ իր հայեցակարգով Քարլայլն ըստ էության առաջ անցավ այդ թեմայի շուրջ դարաշրջանի առաջին գիտական և համապարփակ հետազոտությունից՝ գերմանացի ականավոր արևելագետ **Գուստավ Վելլի** (1808–1889) «**Մուհամմադ մարգարե. կյանքը և ուսմունքը**» աշխատությունից, որը լույս տեսավ 1843 թ.՝ նշաձող սահմանելով 19-րդ դարի եվրոպական իսլամագիտության ասպարեզում¹⁸³: Ջ. Թիլոթսոնի հետահայաց գնահատմամբ՝ Մուհամմադի մասին Քարլայլի բանախոսությունը հետաքրքրություն խթանեց (եթե չասենք՝ առաջ բերեց) **համեմատական կրոնագիտության** նկատմամբ¹⁸⁴: **Քարլայլը հող նախապատրաստեց Ջեյմս Ֆրեյզերի, Էմիլ Դյուրկհայմի և Միրչա Էլիադեի համար**¹⁸⁵:

Այդուհանդերձ, ինչպիսի դեր էլ Քարլայլին վերապահված լիներ իսլամի նկատմամբ իր ժամանակի հայացքների փոխակերպման հարցում, Ա. Պիոնկեի կարծիքով նրա մտածողությունը բոլոր դեպքերում որոշակիորեն կաշկանդված էր իր դարաշրջանի նախապաշարումներով¹⁸⁶: Որպես այդպիսին՝ իսլամը երբեք էլ (նույնիսկ «Հերոսն իբրև մարգարե» բանախոսությունում) քննության արժանի առարկա չի եղել Քարլայլի համար¹⁸⁷: Ինչևէ, նա

180 Owen Dudley Edwards. "The Tone of the Preacher. Carlyle as Public Lecturer in On Heroes, Hero-Worship, and the Heroic in History", էջ 208:

181 Սույն տեղում:

182 Richard Garnett. Life of Thomas Carlyle. London: Walter Scott - 24 Warwick Lane, Paternoster Row, 1887, էջ 102:

183 Տե՛ս Ruth apRoberts, նշվ. աշխ., էջ 101:

184 Տե՛ս Geoffrey Tillotson. A View of Victorian Literature. Oxford: Clarendon Press, 1978, էջ 55:

185 Տե՛ս Ruth apRoberts, նշվ. աշխ., էջ 101:

186 Տե՛ս Albert D. Pionke. "Beyond 'The Hero as Prophet': A Survey of Images of Islam", էջ 13:

187 Տե՛ս նույն տեղում:

բավականաչափ տարված էր դրանով՝ իր երկերում գործածելով դրա առանձին դրվագներ **գործիքային** ու **հոետորական** նպատակներով¹⁸⁸:

Եվ վերջապես, քանի որ իսլամի մասին հանրային ընկալումները (ճշգրիտ կամ ոչ) խորապես ազդել են բրիտանական արտաքին քաղաքականության վրա, այդ թվում՝ **Աֆղանական պատերազմների** (1838–42, 1878–80) և 1857 թ. **Հնդկական ապստամբության** վերաբերյալ հասարակական արծագանքերի առումով, ապա «**Իսլամը և Քարլայլը**» պայմանական թեմայի ընդլայն քննությունը մեծապես կարող է նպաստել իսլամական աշխարհում Մեծ Բրիտանիայի կայսերական ծավալման վրա Քարլայլի հնարավոր գաղափարական ազդեցության գնահատմանը¹⁸⁹:

3. Հերոսն իբրև բանաստեղծ: Դանտե, Շեքսպիր¹⁹⁰

Հերոսապատումի քարլայլյան աստիճանակարգում հերոսները, ինչպես նշեցինք, մարդկային պատմության տարբեր շրջափուլերում երևան են գալիս զանազան կերպարներով. նախնադարյան մարդը հերոսին ընկալում էր իբրև աստծո, առավել լուսավորյալ մարդը՝ իբրև մարգարեի կամ քրմի (քահանայի), իսկ ժամանակակից մարդը նրան մեծարում է իբրև պոետի կամ գրողի կամ էլ, առավել գործնականորեն, պատվում է նրան որպես երկրային իշխանության ճշմարիտ դրսևորման՝ անվանելով **արքա**:

Հերոսականության սանդղակի երրորդ մակարդակում հերոս-բանաստեղծն է: Իր «**Ֆրիդրիխ Շիլլերի կյանքը**» (1825) երկում թվելով մի շարք զանցառված պոետների՝ Քարլայլը նկատում է, որ «այս մարդկանց շարքում պետք է ի հայտ բերել մարդկության ամենավառ տիպարներին ու գլխավոր երախտավորներին: Նրանք են, որ արթուն են պահում մեր հոգու ամենանորբ մասերը»¹⁹¹: Բանախոսի համոզմամբ՝ աստվածությունն ու մարգարեն, որպես հերոսներ, արդեն «հին դարերի արգասիքն են» և «նոր ժամանակներում այլևս չեն կարող վերստին ի հայտ գալ», քանի որ «զուտ գիտական գիտելիքի առաջընթացն»¹⁹² անհնարին է դարձնում դրա հավանականությունը: Ուստի «այժմ մենք տեսնում ենք հերոսին պոետի նվազ հավակնոտ, բայց և պակաս կասկածելի դերով [...]: Պոետը հերոսական կերպար է, որ պատկանում է բոլոր դարերին [...]: Նրան կարող է ծնունդ տալ ինչպես հնագույն, այնպես էլ նորագույն ժամանակը և միշտ էլ ծնունդ

188 Տե՛ս նույն տեղում:

189 Տե՛ս նույն տեղում, էջ 14:

190 Իր այս բանախոսության ընթերցումը Քարլայլն ամենից անհաջող էր համարում, մինչդեռ, ըստ նրա, գրավոր վիճակում այն լավագույնն էր մյուսների շարքում, տե՛ս Letters, հատ. 12, էջ 192:

191 **Thomas Carlyle**. The Life of Friedrich Schiller: Comprehending an Examination of His Works, in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, հատ. 25, էջ 43:

192 On Heroes, էջ 67:

կտա, երբ բնությունը հաճի»¹⁹³: Բենջամին Հ. Լեմանի դիտարկմամբ՝ **Քարլայլի հերոսը սերում է ավելի շատ «անցյալի մեծ պոետներից», քան «ինքնատիպ հանձարից»**¹⁹⁴:

Քարլայլը, սակայն, նկատում է, որ պոետն ու նրա գործառույթը, ի համեմատ մարգարեի, առավել ցածր համարում ունեն մեզանում. «[...] Հերոսն իբրև աստվածություն, հերոսն իբրև մարգարե, իսկ այնուհետ հերոսը լոկ բանաստեղծ է. արդյոք չի՞ թվում, որ **մեծն մարդու** մեր գնահատականը դարից դար անընդհատ նվազում է: Սկզբում մենք նրան աստված ենք համարում, ապա՝ աստծով համակված, իսկ այժմ՝ հաջորդ փուլում, նրա ամենից հրաշագործ խոսքը մեզ մղում է նրան լոկ պոետ համարելու, գերազանց բանաստեղծ, հանձար կամ նման մի բան»¹⁹⁵: Մյուս կողմից՝ Քարլայլը պնդում է, որ մեր օրերում մարդկանց մեջ տակավին առկա է հերոսական ձիրքի հանդեպ յուրահատուկ և անսահման հիացմունք, և եթե «ներկայումս **մեծն մարդուն** բառացի կերպով աստվածային չենք համարում, ապա զուտ այն պատճառով, որ Աստծո՝ իբրև վեհության, իմաստնության ու հերոսականության գերագույն անհաս աղբյուրի մասին մեր պատկերացումները շարունակ **աճել ու զարգացել են**»¹⁹⁶, այլ բնավ ոչ այն հիմամբ, որ մեր մեծարանքն է նվազել հերոսական որակների հանդեպ: Այդուհանդերձ, իր ժամանակի աշխարհում հերոսականության հույլ ու աղճատ ընկալումները և ակնհավոր անհատների պաշտամունքի թշվառ կացությունը Քարլայլը վերագրում էր այսպես կոչված **սկեպտիկական դիլենտանտիզմին**, որը «դարաշրջանի նգովքն»¹⁹⁷ էր. «[...] Մարդիկ պաշտում են **մեծն մարդկանց** առերևույթ, ցուցական դրսևորումները. մեծամասնությունը նույնիսկ չի էլ հավատում, որ հերոսների մեջ պաշտելու ու մեծարանքի արժանի ինչ-որ բան կա»¹⁹⁸: Այստեղ արդեն իսկ նշմարվում են **հերոսականի** գաղափարի վերասերման նշանները:

Այս բանախոսությամբ Քարլայլը նորից ու նորից ընդգծում է հերոսների տարբեր տիպերի և նրանց միջավայրի կապը, հերոսների **շրջելիությունը**. «[...] Հերոս, մարգարե, պոետ և բազում այլ անուններ ենք մենք տալիս **մեծն մարդկանց** տարբեր ժամանակներում ու տեղերում՝ ըստ տարբերիչ գծերի, որ մենք նկատում ենք նրանց մեջ, ըստ այն ոլորտի, որում նրանք դրսևորել են իրենց: Այս սկզբունքով մենք կարող էինք ավելի շատ անուններ տալ նրանց [...]: Այդպիսի բազմազանությունը հետևանք է ոլորտների տարբերակման. **հերոսը կարող է լինել պոետ, մարգարե, արքա, քահանա կամ**

193 Նույն տեղում:

194 Benjamin H. Lehmann, նշվ. աշխ., էջ 93:

195 On Heroes, էջ 72: Տե՛ս նաև 30-րդ հղումը:

196 Նույն տեղում:

197 Նույն տեղում:

198 Նույն տեղում:

ինչ որ կամենաք՝ կախված այն բանից, թե ինչ տեսակ աշխարհում է նա ծնվում [...]: Ես չեմ պատկերացնում հիրավի մեծն մարդու, որը չի կարող լինել այդ բոլոր տիպերը»¹⁹⁹: Կարևորելով նաև բնական հակումները՝ Քարլայլը, սակայն, նկատում է, որ բնությունը բոլոր **մեծն մարդկանց** նույնական կաղապարով չէ, որ ստեղծում է, սակայն «է՛լ ավելի կարևոր է հանգամանքների զանազանությունը, և շատ հաճախ հենց այս **վերջինս** է ուշադրության առնվում»²⁰⁰: Այսպիսով, շեշտելով հերոսի ու նրա միջավայրի, իսկ առավել լայն իմաստով՝ հերոսի ու աշխարհի պատճառական փոխառնչությունը՝ Քարլայլը հատկանշում է տվյալ ժամանակի ու միջավայրի արժեքանությունը՝ ճանաչելու և պաշտելու իր հերոսին:

Ելնելով հերոսների ներքին էության **նույնականության** իր հղացքից՝ Քարլայլն իր սիրելի **ստուգաբանական** մեթոդով **ապացուցում** է պոետի ու մարգարեի՝ որպես հերոսների համանմանությունը. «[...] Որոշ հին լեզուներում այդ անվանումները (poet and prophet – Գ. Ը.) հունանիշ են. **vates**²⁰¹ նշանակում է թե՛ մարգարե և թե՛ պոետ: Եվ հիրավի բոլոր ժամանակներում էլ մարգարեն ու պոետը իմաստային շատ նմանություններ ունեն: Ըստ էության, նրանք տակավին նույնակերպ են հատկապես այն կարևորագույն իմաստով, որ երկուսն էլ **ներթափանցել են տիեզերքի սրբազան առեղծվածի մեջ**, ինչը Գյոթեն անվանում է **բաց գաղտնիք**»²⁰²: Առհասարակ, **Քարլայլին «քիչ են հետաքրքրում այն պոետները, որոնք միաժամանակ նաև մարգարեներ չեն»**²⁰³: Սակայն, մյուս կողմից, մարգարեն էլ իր հերթին է նմանեցվում պոետի: Որպես մարգարե՝ բանաստեղծը հայտնում է ճշմարտությունը, մինչդեռ բանաստեղծի դերում հանդես եկող մարգարեն շատ ավելի հազվագյուտ, նշանակալից ու արժեքավոր ծառայություն է մատուցում՝ «հողաբաշխ խոսքով արտահայտելով այն ամենը, ինչը զգում են բոլորը»²⁰⁴:

Առաջին անգամ հենց այս բանախոսությունում հիշատակելով **հերոսականության** ուսմունքի իր գլխավոր աղբյուրներից ու ազդեցություններից մեկին՝ գերմանական իդեալիզմի հիմնադիրներից **Ֆրիդրիխ Ֆիխտենին** (1762–1814) և **«աշխարհի աստվածային գաղափար»**-ի²⁰⁵ նրա հղացքը՝ Քարլայլը հատկանշում է, որ «**vates**-ը՝ մարգարե թե պոետ, ներ-

199 Նույն տեղում, էջ 67:

200 Նույն տեղում, էջ 68:

201 Լատ. **մարգարե, տեսանող, բանաստեղծ**: Հին հայոց միջավայրում այդպիսիք էին գուսանները (իրանական փոխառություն **gōsan** – **ասացող**):

202 On Heroes, էջ 69:

203 **Herbert J. C. Grierson**. Carlyle & Hitler. *The Adamson Lecture in the University of Manchester December 1930, with some additions and modifications*. Cambridge: at the University Press, 1933, էջ 32:

204 **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 133:

205 Չերմ. «die göttliche Idee», տես **Johann G. Fichte**. On the Nature of the Scholar and its Manifestations [Über das Wesen des Gelehrten und seine Erscheinungen im Gebiete der Freiheit], in *The Popular Works of Johann Gottlieb Fichte*. Trans. **William Smith**. 4th ed. 2 vols. London, 1889, հատ. 1, էջ 210:

թափանցել է դրա մեջ [...]»²⁰⁶: Սրանով բանախոսը ներկայացնում է **հերոսի** ու **հերոսականի թերևս կարևորագույն առաքելությունը, այն է՝ մարդկության համար բացահայտել ու մեկնաբանել «աստվածային գաղափարը», այդ «սրբազան առեղծվածը»**²⁰⁷: Ըստ որում՝ *vates*-ի գլխավոր հատկանիշը դարձյալ **անկեղծությունն** է, հակառակ դեպքում նա չի կարող *vates* լինել: Այս իմաստով մարգարեն ու պոետը ևս մեկ են՝ որպես **բաց գաղտնիքի** մեկնիչներ:

Դառնալով պոետի ու մարգարեի տարբերությանը՝ Քարլայլը գրում է. «[...] **Vates** մարգարեն ըմբռնել է այդ **սրբազան առեղծվածն** առավելապես **բարոյական** առումով՝ իբրև չար ու բարի, պարտականություն և արգելք, իսկ *vates* պոետը՝ այն իմաստով, ինչը գերմանացիներն անվանում են **գեղագիտական**՝ իբրև գեղեցկություն են: Առաջինը մեզ համար բացահայտում է **այն, ինչ մենք պետք է անենք**, իսկ մյուսը՝ **այն, ինչ պետք է սիրենք**: Բայց այս երկու ոլորտները փոխներթափանցված են և չեն կարող զատված լինել»²⁰⁸: Մյուս կողմից, սակայն, Քարլայլը նկատում է, որ մարգարեն ևս ցուցանում է, թե ինչն է արժանի սիրո, հակառակ դեպքում «ինչպե՞ս նա պետք է իմանա, թե ինչ է մեզ վիճակված անել»²⁰⁹: Հայսմ՝ ինչպես մարգարեները խորհրդանշում էին **բարոյականությունը**, այնպես էլ բանաստեղծները՝ **գեղեցկությունը**: Ահավասիկ, Դանտեի ու Շեքսպիրի միջոցով այդ երկուսն ի մի են՝ ապահովելով է՛լ ավելի լայն փոխըմբռնում²¹⁰:

Արդ, գիտության տիրապետող ազդեցության պայմաններում աստվածությունն ու մարգարեությունը վերաճեցին հերոսականի նոր և արդիական արտահայտչաձևերի: Պոետներ Դանտեն ու Շեքսպիրը խոսում էին «աշխարհի ձայնով»²¹¹, դիմելով եվրոպական պատմության երկու տարբեր, սակայն միմյանց փոխլրացնող հոգեբանական հոսանքների²¹²: Իտալացի բանաստեղծն «աշխարհ էր եկել՝ երաժշտականորեն մարմնավորելու Միջնադարի կրոնը՝ մեր արդի Եվրոպայի կրոնը, նրա **ներքին կյանքը**»²¹³: Այնինչ Շեքսպիրը, ըստ բանախոսի, «մարմնավորում է այնօրյա Եվրոպայի **արտաքին կյանքը**՝ իր ասպետություններով, վարվելակարգերով, բարքերով, պատվախնդրությամբ, թե ինչ գործնական մտածելակերպ, գործելաձև ու աշխարհայացք ունեին այնօրյա մարդիկ»²¹⁴: Այլորեն՝ «Դանտեն մեզ հավատ կամ հոգի է տվել, [իսկ] Շեքսպիրը, բնավ ոչ նվազ վեհությամբ, փորձա-

206 On Heroes, էջ 69:

207 Նույն տեղում:

208 Նույն տեղում, էջ 69-70:

209 Նույն տեղում, էջ 70:

210 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 10:

211 On Heroes, էջ 86:

212 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 10:

213 On Heroes, էջ 86:

214 Նույն տեղում:

ռություն և մարմին է տվել»²¹⁵: **Ճեպագղակի** (catalyst) յուրահատուկ գործառույթ ստանձնելով՝ այս պոետներն իրենց բանարվեստով նպաստեցին փոխըմբռնման ու խորագագացության աճին²¹⁶: Առավել լայն հատույթով՝ «քրիստոնեության հոգու»²¹⁷ դաստեական այլաբանության քարլայյան մեկնությունը ցուցանում է հեթանոսությունից դեպի քրիստոնեություն²¹⁸ անցման պահը, երբ «բնության գործառույթունների» զգայական ընկալումն իր տեղը զիջեց մարդկային հարաբերություններում «մարդու բարոյական օրենքի»²¹⁹ առավել հղկված ընկալմանը²²⁰:

Դաստեի ու Շեքսպիրի հերոսական կերպարների բուն քնությունից առաջ հարկ ենք համարում որոշակիորեն անդրադառնալ պոետի ու պոեզիայի վերաբերյալ Քարլայլի ընկալումներին ու պատկերացումներին, որոնք էապես կարևոր են բանաստեղծի հերոսական կերպարը հասկանալու դիտանկյունից, և որոնք քննարկվում են բանախոսության սկզբնամասում:

Տակավին 1821 թ. **Ջոաննա Բեյլիի** (1762–1851) բանաստեղծական երկրորդ ժողովածուի մասին իր գրախոսականում Քարլայլը գրում է. «[...] **Պոետը պետք է ունակ լինի ոչ միայն [...] գնահատելու իր հերոսին, այլև թափանցելու նրա բուն էություն՝ տեսնելու իր հերոսի աչքերով և զգայելու նրա սրտով**»²²¹, քանզի «պոետը, որ կարող է լոկ նստել աթոռին և չափատողեր հղանալ, երբեք որևէ մեծարժեք բանատող չի ստեղծի: **Նա չի կարող գովերգել հերոսական ռազմիկին, եթե ինքը ևս առնվազն հերոսական ռազմիկ չէ**»²²²: Քարլայլի համոզմամբ՝ «բուն որակները, որ հարատև գործ են հղանում, մեծ արվեստագետին կապում են հերոսականի այլ ձևերին»²²³: Իսկ արդեն 1828 թ. **Ռոբերտ Բրոնսի** (1759–1796) մասին Քարլայլի հոդվածը լի է մի շարք ձևակերպումներով ու հղացքներով, որոնք տարիների հեռավորությունից նոր հնչեղություն են ստանում «Հերոսների մասին» բանախոսական շարքում: Օրինակ՝ «[...] Բանաստեղծի համար իդեալական աշխարհը հեռու չէ իրական աշխարհից, այլ վերջինիս ներքո է ու դրա մեջ: Ավելին, նա պոետ է հենց նրանով, որ կարող է նկատել իդեալական աշխարհը իրական աշխարհում]: Բանաստեղծը պետք է աչք ունենա՝ նշմարելու այս ամենը և սիրտ՝ հասկանալու համար [...]: Նա

215 Նոյն տեղում:

216 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 10-11:

217 On Heroes, էջ 83:

218 Այս բանախոսության մեջ է, երբ, դառնալով հեթանոսության ու քրիստոնեության միջև գլխավոր տարբերությանը, Քարլայլը հատկանշում է, որ հեթանոսությունը դիմում էր մարդու **զգայական** բնությանը, իսկ քրիստոնեությունը՝ **բարոյական**, տե՛ս նույն տեղում:

219 Նոյն տեղում:

220 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 11:

221 **Thomas Carlyle**. “Miss Baillie’s Metrical Legends” [1821], in *Essays on Literature*, էջ 11:

222 On Heroes, էջ 67-68: Քարլայլի գեղագիտական ուսմունքի հիմնարար դրույթներից մեկը հետևյալն է՝ «Ուրիշների հուզելու մեծ գաղտնիքն այն է, որ բանաստեղծն ինքը ևս հուզված լինի» (**Thomas Carlyle**. *The Life of Friedrich Schiller*, էջ 18):

223 **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xlviii:

vates է, տեսանող, օժտված է տեսանելու շնորհով²²⁴: [Իսկ] եթե աշխարհն իմաստ չունի նրա համար [...], ապա նա պոետ չէ, և [նույնիսկ] Դելփիքը նրան պոետ չի դարձնի»²²⁵:

Քարլայլը պոեզիայի էական հատկորոշիչը **մեղեդին** է համարում, **երաժշտականությունը**²²⁶, որի ներքո, սակայն, չպետք է հասկանալ զուտ բանաստեղծական լեզվին բնորոշ նուրբ ու գերիչ հնչերանգը²²⁷: **Մեղեդի** ասելով Քարլայլը նկատի ունի «հարակցության ներքին ներդաշնակությունը»²²⁸, որը բանաստեղծի մտքի ու էության հատկանիշն է: Ուստի պոեզիան մեղեդային է ոչ միայն խոսքով ու բառերով, այլև իր բովանդակ «ոգով ու էությանամբ»²²⁹: Երաժշտական միտքը «թափանցում է իրերի բուն էություն, նշմարում դրանում թաքնված խորին առեղծվածը՝ **մեղեդին**»²³⁰: Բոլոր նվիրական ու խորունկ երևույթները, ըստ Քարլայլի, մեղեդի են, երգեցողություն: Հետևաբար «պոեզիան **մենք կանվանենք երաժշտական միտք: Պոետը նա է, որի մտածողությունը երաժշտական է**»²³¹: Իսկ «ներքին ներդաշնակությունը» վկայում է այն մասին, որ բանաստեղծն ըմբռնել է «բաց գաղտնիքը»²³², **գաղտնիք**, քանզի այն ներքին է ու հոգևոր, և **բաց**, քանզի ցանկության դեպքում բոլորը կարող են տեսնել այն, թեպետ դա արտահայտված է միմիայն բանաստեղծի վսեմ մեղեդիով: Այսպիսով՝ **պոետը, ի տարբերություն մարգարեի, հասարակ մարդկանց ձայնափողն է, և յուրաքանչյուրը կարող է հաղորդակից դառնալ նրա հայտնությանը**: Քարլայլի համոզմամբ՝ «պոեզիայի ջիղն առկա է բոլոր մարդկանց սրտերում [...]: Մենք բոլորս պոետ ենք, երբ լավ ենք **կարդում** բանաստեղծությունը: «Երևակայությունը, որ սարսում է դանտեական դժոխքից»²³³, մի՞թե նույն ձիրքը չէ (թեև ավելի թույլ չափով), ինչ որ Դանտեի սեփական երևակայությունը»²³⁴: Ուստի **հերոս-պոետը հերոս-մարգարեից է՛լ ավելի մեծ չափով է իր հետևորդների ներկայացուցիչն ու նրանց իղձերի արտահայտիչը**²³⁵:

Պոեզիայի մեծագույն գործառույթը, ըստ Քարլայլի, թվացյալության քողի ներքո իրականության ճշմարտության ու գեղեցիկի բացահայտումն է:

224 Ֆ. Ոոգենբերգը հերոսականի այս հատկանիշը համեմատում է **Չ. Վ. Ֆ. Հեգելի** (1770-1831) պատմափիլիսոփայությունում առկա համանման դիտարկման հետ, տես **Philip Rosenberg**. *The Seventh Hero: Thomas Carlyle & the Theory of Radical Activism*. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1974, էջ 191:

225 **Thomas Carlyle**. “Burns” [1828], in *Essays on Literature*, էջ 39:

226 Գեորգ Բ. Թեմիսոնը նկատում է, որ Քարլայլը պոեզիան երկու՝ **մեղ** (պոեզիան՝ իբրև երգ/տաղ) և **լայն** (պոեզիան՝ որպես մարգարեություն) իմաստներով էր ընկալում, տես *The Collected Poems of Thomas and Jane Welsh Carlyle*. Ed. **Rodger L. Tarr** and **Fleming McClelland**. With foreward by **G. B. Tennyson**. Greenwood, Fla.: Penkevill, 1986, էջ xv-xvi:

227 Տես **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 133:

228 *On Heroes*, էջ 71:

229 Նույն տեղում:

230 Նույն տեղում:

231 Նույն տեղում, էջ 72:

232 Նույն տեղում, էջ 69:

233 Այս նույն միտքը Քարլայլն արտահայտել էր նաև Որբերտ Բրոնսին նվիրված գրախոսական հոդվածում, տես “Burns” [1828], in *Essays on Literature*, էջ 43-44:

234 *On Heroes*, էջ 70:

235 Տես **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 134:

Իր «Դիդրո» հոդվածում (1833) նա գրում է. «[...] Պոեզիան ավելի ու ավելի է ընկալվելու իբրև ոչ այլ ինչ, եթե ոչ առավել բարձր իմացություն [...]։ **Մտածողը պոետ է**²³⁶, **տեսանող** [...]»²³⁷։

Լուիզ Մ. Յանգի կարծիքով՝ հերոսական բանաստեղծի քարլայյան հայեցակարգը պոետի՝ որպես **իր ժամանակի գավակի** վերաբերյալ շիլլերյան տեսության և «գրական քրմի»²³⁸ իբրև **աստվածային գաղափարի** մեկնիչի մասին ֆիխտեական հղացքի յուրատեսակ խառնուրդ է²³⁹։ Այս տեսանկյունից դարաշրջանի պոեզիան կարող է արտահայտվել ինչպես, օրինակ, Քրոմվելի հերոսական առաջնորդությամբ, այնպես էլ Շեքսպիրի դրամաներով կամ Դանտեի էպիկական պոեզիայով²⁴⁰, քանզի «մարդու բարձրագույն էությանը դիմող կամ այն ներկայացնող բոլոր տարակերպերը համարվում են պոեզիայի կրտսեր քույրեր»²⁴¹։

*Պոեզիայի հանդեպ Քարլայլի վերաբերմունքն ու ընկալումները երբեմն հակասական են։ Բանն այն է, որ ընդհանրական իմաստով Քարլայլն իր դարաշրջանը համարում էր արձակի դար, որում պոեզիան անցյալի վերապրուկ կամ ժամանակավրեպ մի բան է, որպես զվարճանք՝ թերևս անվնաս, սակայն անարդյունավետ ու անհարիր՝ իբրև ծանրակշիռ մրբերի արտահայտչամիջոց*²⁴²։ Այսպիսով՝ մինչդեռ Քարլայլի ուշ շրջանի երկերում հաճախ գովերգվում է **անցյալի պոեզիան**, այդուհանդերձ պարզորոշ է, որ նա հասցնեց կորցրեց հեղափոխությունն ու հավաքը **իր ժամանակի պոեզիայի** հանդեպ։ Հայացքների այս փոփոխությունն ու խզումը պոեզիայից մասամբ կարելի է վերագրել 1830-ական թթ. անարևնեպասար միջավայրին, երբ քաղաքական ու փնտրեական վերափոխությունը համակել էր հասարակական միտքը, և Քարլայլի պնդմամբ՝ **ձգնաժամի ընթացքում նույնիսկ լավագույն պոետներն են անկարող արձագանքելու, եթե ուշադրության չեն առնում ժամանակակից կյանքի դժվարին իրողությունները**։

Դեյվիդ Զ. ԴեԼատրան պոեզիայից Քարլայլի խզումը պայմանավորում է նրա՝ **արդիականության ու հավաքի անհնարինության** միջև կապի սուր ընկալմամբ. «[...] Քարլայլի սեփական կարիերայի ու պոետիկայի ձգնաժամը արդյունք էր վաղ 1830-ականներին նրա այն խորին ըմբռնումի, որ եթե ձշմարիտ պոեզիան, որը մշտապես «սրբազան, աստվածային ու ոգեշունչ» է, անխուսափելիորեն «հավաք» է պահան-

236 «Գերմանական պոեզիայի պատմական քննություն» խորագրով գրախոսական հոդվածում (1831) Քարլայլը գրում է, որ «ճշմարիտ պոետը **ոգեշունչ մտածողն է**, մի Օրփևս, որի քնարը սանձում է վայրի զագաններին, իսկ անշարժ ժայռերը վերածում դոյակների ու հոյակերտ բնակելի քաղաքների» (Thomas Carlyle. “Historic Survey of German Poetry”, in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, հատ. 27, էջ 369)։

237 Thomas Carlyle. “Diderot” [1833], in *Essays on Literature*, էջ 224։

238 Բանաստեղծի իբրև **քրմի/քահանայի** քարլայլյան հղացքը զուգահեռվում է պոետի՝ որպես մարգարեի եբրայական ըմբռնումին և հակառակը, տես Charles F. Harrold, նշվ. աշխ., էջ 307, ճմբ. 43։

239 Տես Louise M. Young, նշվ. աշխ., էջ 112։

240 Տես նույն տեղում։

241 Thomas Carlyle. “State of German Literature” [1827], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, հ. 26, էջ 61։

242 Իր նամակներից մեկում Քարլայլն անգամ ափսոսանք է հայտնում, որ շնորհալի ստեղծագործողները չափաօրոշվում են արտահայտում իրենց հանձարը, տես Letters, հ. 22, էջ 16։

ջում, ապա պոեզիայի նույնիսկ «հանդուրժելի նմանակը» անհնարին է այս անհավասար դարաշրջանում»²⁴³:

Առաջին հայացքից ուշագրավ է Քարլայլի՝ պոետներին ու գրողներին (men of letters) որպես հերոսների առանձին տիպեր դիտարկելը: Այս առումով Ռոբերտ Վ. Կուշը նկատում է, որ, հիրավի, էական «տարբերություններ չկան **աստվածության** և **արքայի** (երկուսն էլ քարիզմատիկ առաջնորդներ են), **մարգարեի** ու **քահանայի** (երկուսն էլ կրոնական հեղափոխականներ են) կամ **պոետի** ու **գրողի** (երկուսն էլ խոսքարվեստի ներկայացուցիչներ են) միջև»²⁴⁴: Սակայն նրանց միջև բավականաչափ **աստիճանական տարբերություններ** կան, այն է՝ նրանցից յուրաքանչյուրի մտահորիզոնի ընդգրկումն ու խորությունը, այն պատասխան զգացումը, որ նրանք արթնացնում են մարդկանց մեջ և ընդունելությունը, որին արժանանում են իրենց ժամանակակիցների կողմից²⁴⁵: Սրանցով է արդարացվում հերոսների տիպերի անվանական այդ տարբերությունը:

Ի մի բերելով ասվածը՝ փաստենք, որ Քարլայլի պատկերացմամբ հերոս-բանաստեղծն ու հերոս-գրողը միմյանցից տարբերվում են **ինտելեկտով**, բայց հույժ առանձնահատուկ իմաստով, քանզի պոետի մտավոր ներուժն ընդհանուր ոչինչ չունի գիտականի հետ²⁴⁶: **Պոետի տարբերիչ հատկանիշը, ըստ Քարլայլի, ինտելեկտի ուժն է**. «Անկեղծությունն ու խորատեսությունն են, որ գրողին պոետ են դարձնում»²⁴⁷: Արդ, **հերոսների քարլայլյան սանդղակում հերոս-պոետը վեր է կանգնած հերոս-գրողից**, այլ կերպ ասած՝ **հարդյունս ժամանակի ընթացքում հերոսականի վայրընթաց զարգացման հերոս-պոետը վերասերվել է հերոս-գրողի**:

Դիանտեն ու Շեքսպիրն առանձնահատուկ տեղ ունեն Քարլայլի հերոսաշարում և բացառիկ կարևորություն նրա թեմայի համար: Կարելի էր կարծել, թե ի համեմատ այն հերոսների, որոնք գործում են կրոնական ու բարոյական ոլորտում (աստվածություն, մարգարե), Քարլայլի երկու տիպական բանաստեղծները նվազ նշանակալից կամ ազդեցիկ կթվային²⁴⁸: Սա էական դիտարկում է այն իմաստով, որ Քարլայլը դժկամորեն էր հավանություն տալիս Գյոթեի ու Շիլլերի այն բանաձևին, թե «**գեղեցիկը վեր է բարուց**», ուստի արվեստի պաշտպանությունը զուտ գեղագիտական միջոցներով նրա համար անհնարին էր²⁴⁹: Այն, ինչ Քարլայլն իրականում

243 David J. DeLaura. "The Future of Poetry: A Context for Carlyle and Arnold", in *Carlyle and his Contemporaries: Essays in Honor of Charles Richard Sanders*, ed. John Clubbe. Durham, N. C.: Duke University Press, 1976, էջ 159:

244 Robert W. Kusch. "Pattern and Paradox in Heroes and Hero-Worship", in *Studies in Scottish Literature*, vol. 6, iss. 3 (1969), էջ 151:

245 Տե՛ս նույն տեղում:

246 Տե՛ս Robert A. Donovan. "Carlyle and the Climate of Hero-Worship", էջ 133:

247 On Heroes, էջ 72:

248 Տե՛ս Michael K. Goldberg, *Introduction*, էջ xlvii:

249 Տե՛ս նույն տեղում, էջ xlvii-xlviii:

առաջարկում էր, ավանդական «ars longa, vita brevis» («արվեստը հարատև է, կյանքը՝ կարճ») թեմայի մի տարեղանակ էր²⁵⁰:

Բնութագրելով ստեղծագործողի հերոսական դերակատարությունը՝ Քարլայլը կապ է տեսնում **լեզվի/խոսքի** և **գործի/գործողության** միջև, ուստի նա անմտություն է համարում այն տեսակետը, թե ստեղծագործող հերոսները աշխարհի լոկ կրավորական հանդիսականներ են:

Յանգը նկատում է, որ շատ հաճախ հերոսական ներուժն արտահայտվում է ոչ թե **գործելու** կամ **գործողության** դաշտում, այլ **մտքի** ու **մտածողության**, և այդժամ հերոսը հանդես է գալիս իբրև Դանսել, Շեքսպիր, Ռուսո, Բրոնս²⁵¹: Նրա դիտարկմանը «աներկբա է, որ Քարլայլը **գործող/գործուն** մարդուն (man of action) առավել բարձր է դասում **մտքի/մտածող** մարդուց (man of thought)», քանի որ «պարմաթանի դիտարկյունից առաջինների կատարած աշխատանքը շատ ավելի նշանակալից է»²⁵²: Դանսելի կամ Շեքսպիրի նվաճումները գրի առնված պարմության առարկայական սահմաններից անդին են և գուցե վերջին հաշվով «առավել նշանակալից են **գործնական պարմության** (acted history) մեջ, սակայն նվազ օգտակար են պարմաթանի համար»²⁵³:

Առհասարակ, հերոսների **քարլայլյան արժեկարգում (մերիտոկրատիա)** գրողներն ու պոետները հերոսների պանթեոնում հավասարազոր են պետական այրերին ու ռազմիկներին: Հերոսական ստեղծագործողի մեջ կարելի է գտնել **քաղաքական գործչի, մտածողի, օրենսդրի**²⁵⁴ ու **փիլիսոփայի** հատկանիշներ, և «այս կամ այն չափով նա կարող է լինել այս բոլոր դերերում [...]»: Հավասարապես ճիշտ է և հակառակը, քանզի հերոսների մյուս բոլոր տիպերի մեջ էլ պոետի ինչ-ինչ հատկանիշներ կան. «[...] Նապոլեոնի խոսքը համարժեք է աուստելիցյան ճակատամարտերին», Լուի XIV-ի մարշալները «բանաստեղծական մարդիկ»²⁵⁵, իսկ Միրաբոն կարող էր մեծ գրող լինել, եթե նրա կյանքն այդ ուղով ընթանար»²⁵⁶: Ինչպես երևում է, այստեղ ևս գործում է հերոսականի ներքին էության **նույնականության** և հերոսների **շրջելիության** քարլայլյան ուշագրավ հայեցակարգը:

Ըստ բանախոսի՝ **գրական քրմության** ամենից երևելի դեմքերն են Դանստեն՝ «տասը մունջ դարերի»²⁵⁷ ձայնը, «միջնադարի ձայնավո-

250 Տե՛ս նույն տեղում, էջ xlvii:

251 Տե՛ս Louise M. Young, նշվ. աշխ., էջ 84:

252 Նույն տեղում:

253 Նույն տեղում:

254 Թե՛ն Քարլայլը Պ. Ռ. Շելլի (1792-1822) պոեզիայի սիրահար չէր, սակայն այստեղ նա արձագանքում է «Պոեզիայի պաշտպանական»-ում (գրվել է 1821 թ., 1-ին հրատ.՝ 1840 թ.) Շելլի այն պնդմանը, թե «պոետներն աշխարհի չճանաչված օրենսդիրներն են», տե՛ս Percy Bysshe Shelley. A Defence of Poetry. Ed. John E. Jordan. Indianapolis: Bobbs, Library of Liberal Arts, 1965, էջ 80:

255 Հմմտ. «Մարդու կոպելու ձևի մասին կարելի է դատել այն բանից, թե ինչպես է նա երգում: Նրա խիզախությունը կամ դրա պակասը տեսանելի է նրա արտաբերած բառի ու ձևավորած կարծիքի մեջ ոչ պակաս, քան նրա հասցրած հարվածի: Նա մեկ ամբողջություն է և միևնույն Ես-ը ամենուր քարոզում է այս բոլոր եղանակներով» (Օն Իրոս, էջ 91):

256 Նույն տեղում, էջ 68:

257 Նույն տեղում, էջ 83:

ղը»²⁵⁸ և անգլիացի Շեքսպիրը, որին նա համարում է միջնադարյան կաթոլիցիզմի «ազնվագույն արգասիքը»²⁵⁹: Այս երկուսի ընտրությունը Դոնովանը որոշ իմաստով անհաջող է համարում՝ նկատելով, որ Դանտեն այնքան էլ հոգեհարազատ չէ²⁶⁰ Քարլայլին, իսկ Շեքսպիրի անհատականությունն առհասարակ ընդդիմանում է **գրական քրմի** կերպարին²⁶¹: Այդուհանդերձ, այս ընտրությունը փաստացի **պարտադրվել էր** Քարլայլին Դանտեի ու Շեքսպիրի վիթխարի փառքով ու հեղինակությամբ²⁶². «[...] Նրանք անջատ են միմյանցից, յուրատեսակ արքայական առանձնության մեջ. ոչ ոք հավասար և նման չէ նրանց: Աշխարհի ընդհանրական գիտակցության մեջ մի որոշակի անդրանցականություն և փառք, որպես ավարտուն կատարելություն, համակում է այս երկուսին»²⁶³:

Շեքսպիրին ու Դանտեին Քարլայլը համարում է եթե ոչ աստվածացված (deified), ապա սրբադասված (beatified) պոետներ, «պոեզիայի սրբեր»²⁶⁴, թեև «ո՛չ Պապը և ո՛չ էլ կարդինալները» որևէ դեր չունեն դրանում. «[...] Հակառակ ամեն տեսակ աղճատ ազդեցության՝ ամենից անհերք-սական ժամանակներում տակավին այսպիսին է հերոսականի հանդեպ մեր անխորտակ պաշտամունքը»²⁶⁵, իսկ **նա, ով չի տեսնում մեծն մարդու մեծությունը և «իր ողջ սրտով ու խանդավառությամբ չի սիրում և մեծարում նրան, հավետ դատապարտված է նսեմ լինելու»**²⁶⁶:

Ջուզահեռներ տանելով Դանտե ու Շեքսպիր բանաստեղծների հերոսական հատկանիշների միջև՝ Քարլայլը հետևյալ տարբերություններն է մատնանշում. Դանտեն պատկերում է մարդու **ներքին** կյանքը, իսկ Շեքսպիրը՝ **արտաքին**, Դանտեի համար հետաքրքրական է **հոգին**, Շեքսպիրի համար՝ **մարմինը**, Դանտեն **խորն** է, Շեքսպիրը՝ **լայնածիր**, Դանտեի բանաստեղծական երևակայությունն ամենից առաջ **ըմբռնողություն** է, իսկ Շեքսպիրինը՝ **դիտողականություն**: Եվ թեպետ Քարլայլը Շեքսպիրին բացահայտորեն գերադասում է Դանտեից, այդուհանդերձ ակներև է, որ **հենց Դանտեն է ամենից կատարյալը մարմնավորում հերոս-պոետին**²⁶⁷: Ըստ Դոնովանի՝ **Դանտեն Քարլայլի այն հերոսներից է, որոնք լույս են սփռում նրա հերոսականության գաղափարի վրա**²⁶⁸:

258 Նույն տեղում, էջ 84:

259 Նույն տեղում, էջ 87:

260 Հակառակ կարծիքի է Դեևաուրան՝ նկատելով, որ Քարլայլին առավել մերձ է դանտեական խառնվածքը, տես **David J. DeLaura**. “Ishmael as Prophet: Heroes and Hero-Worship and the Self-Expressive Basis of Carlyle’s Art”, էջ 721:

261 Տես **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 133:

262 Տես նույն տեղում:

263 On Heroes, էջ 73:

264 Նույն տեղում:

265 Նույն տեղում:

266 **Thomas Carlyle**. “Schiller” [1831], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, հատ. 27, էջ 167:

267 Տես **Robert A. Donovan**. “Carlyle and the Climate of Hero-Worship”, էջ 133:

268 Տես նույն տեղում:

Դանտե: «Հերոսների մասին»-ում Դանտեն լայն առումով հանդես է գալիս իբրև հետդասական շրջափուլի առաջին աշխարհիկ մտածող²⁶⁹: Նրա «Աստվածային կատակերգության» առաջին մասի՝ «Դժոխք»-ի 1835 թ. ընթերցումից հետո²⁷⁰ Քարլայլն անդրադարձավ իտալացի բանաստեղծին 1838 թ. գրականության պատմության մասին իր բանախոսական շարքում՝ հատկանշելով նրա «բարոյական խորությունը», «արտի անկեղծությունն» ու «հոգու վեհությունը»²⁷¹ և պաշտպանելով նրան այն մեղադրանքից, թե իբր Դանտեն չարախնդորեն վրեժխնդիր էր եղել իր թշնամիներից՝ «գետեղելով նրանց դժոխքի պարունակում»²⁷²: Քարլայլի բնորոշմամբ՝ «Աստվածային կատակերգություն»-ը ոչ թե նսեմ քինախնդրության, այլ «արդարության մաքրագույն ոգու»²⁷³ դրսևորում է:

Դանտեի հերոսական կերպարը Քարլայլը դրվատել էր նաև 1839 թ. «Արդի եվրոպայի հեղափոխությունները» խորագրով բանախոսական շարքում: Սակայն ֆլորենտացի պոետի մասին իր հայացքները նա զարգացրեց և համապարփակ ներկայացրեց հենց 1840 թ. «Հերոսների մասին» շարքում՝ գուգադրելով նրան Շեքսպիրին:

Դանտեի կյանքի պատմությունը դյուրավ համապատասխանում էր հերոսի՝ որպես **ռազմիկի** ու **օտարականի** քարլայլյան տիպական հղացքին: Դանտեն հանդես է գալիս որպես աննկուն դիտորդ, որի լրջմտությունն ու դիտողականությունը թույլ տվեցին նրան թափանցել անցավոր ժամանակի մեջ և ստահայել հավերժությունը: Նա մի մարդ է, որը «համակ ընդդիմացավ և ցկյանս անզիջում պայքար մղեց ընդդեմ աշխարհի»²⁷⁴: Դանտեի հանճարի գերակա հատկորոշիչը Քարլայլը համարում է «լարվածություն»-ը (intensity)՝ նկատելով, որ Դանտեն ոչ թե «լայնամիտ ու համապարփակ մտքի» տեր է, այլ «սահմանափակ և նույնիսկ հերձվածողական»²⁷⁵: [...] Բոլոր իրերի միջով նա թափանցում է, այսպես ասած, ընդհուպ կյանքի բուն էություն»²⁷⁶:

269 Տե՛ս Christopher Harvie. "Wild Annandale Grapeshot: Carlyle, Scotland, and the Heroic", in *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History* (Rethinking the Western Tradition), էջ 267:

270 Բոլոնյայի համալսարանում փիլիսոփայության նախկին պրոֆեսոր, իսկ 1830-ական թթ. լոնդոնյան տարագրության մեջ գտնվող կոմս Կառլո Պեպոլիի (1796-1881) օգնությամբ Քարլայլը 1835 թ. ամռան ընթացքում ամեն չորեքշաբթի օրվա գիշերը բնագրով կարդում էր Դանտեի «Աստվածային կատակերգություն»-ը, տե՛ս Letters, հատ. 8, էջ 212: Պեպոլիի հետ այս համատեղ ընթերցումների բերումով էր, որ Դանտեն մեծապես հոգեհարազատ դարձավ Քարլայլին: 2,5 տարի անց, ի նախապատրաստումն 1838 թ. գրականության պատմության վերաբերյալ իր բանախոսությունների, որոնցից 5-րդը նվիրված էր Դանտեին, Քարլայլը կարդում էր «Դժոխք»-ը (Inferno) իբրև ամենօրյա ուսումնասիրության առարկա՝ համարելով «այդ մեծ ու հավերժական» պոետը «խրթին աշխատանք» (նույն տեղում, հատ. 10, էջ 19, ծնթ. 18):

271 Thomas Carlyle. Lectures on the History of Literature, էջ 86:

272 Նույն տեղում, էջ 90:

273 Նույն տեղում, էջ 91:

274 On Heroes, էջ 74:

275 Գրականության պատմության մասին բանախոսական շարքում Դանտեին համեմատելով Շեքսպիրի հետ Քարլայլը նաև նկատում է, որ իտալացի մեծ բանաստեղծն «առավել մտայլ ու կաշկանդված» էր, տե՛ս Thomas Carlyle. Lectures on the History of Literature, էջ 93:

276 On Heroes, էջ 79:

Դանտեի ստեղծագործությունից խորություն ու երաժշտություն էին բխում. նրա պոեզիան, ըստ էության, **երգեցողություն** էր²⁷⁷: Ըստ Քարլայլի՝ «**երգասացությունը հերոսականի խոսքն է**: Բոլոր **հին** պոեմները՝ Հոմերոսին ու մնացյալը, ձմարիտ երգեր են: Խստիվ ասած՝ բոլոր իսկական պոեմներն էլ երգեր են»²⁷⁸: Ուստի Դանտեի «Աստվածային կատակերգության» բարձրագույն դրվատիքն այն է, որ այդ ստեղծագործությունը «բոլոր առումներով երգեցողություն է»²⁷⁹, որ դեռ հարակայելու է «երկար հազարամյակներ»²⁸⁰, դա «բոլոր պոեմներից **ամենաանկեղծն** է: Այստեղ նույնպես **անկեղծությունն** ենք համարում արժեչափը»²⁸¹:

Դանտեի մեծությունը Քարլայլը նախ և առաջ բարոյական իրողություն է համարում. «[...] Իր խստամբերությամբ, լրջնությամբ ու խորությամբ նա զուգահեռը չունի արդի աշխարհում: Այդ զուգահեռը փնտրելու համար պետք է դիմենք հրեական Աստվածաշնչին»²⁸², քանզի **միմիայն ի շարս հինուխտյան մարգարեների կարելի է հայտնաբերել նրա տիպարը**. «[...] Իր անկեղծության խորությամբ Դանտեն նույնպես նման է հին մարգարեներին: Նրա խոսքերը ևս սրտաբուխ էին»²⁸³:

Քարլայլն այն համոզմունքն է հայտնում, որ Դանտեի պոեմը կարող է ամենից հարատև գործը լինել, ինչին Եվրոպան ցարդ հասել է, քանզի «ոչինչ այնքան մնայուն չէ, որքան իրավամբ արտաբերված խոսքը»²⁸⁴: Ուստի թեպետ «Եվրոպան բազում բաներ է ստեղծել՝ մեծ քաղաքներ ու կայսրություններ, հանրագիտարաններ, հավատալիքներ [...], բայց այն քիչ բանի է հասել, որ կարող է համեմատվել Դանտեի մտքի հետ»²⁸⁵:

Դանտեի՝ իբրև **մշակութային հերոսի** արժեքայնության դիտարկման համապատկերում հատկանշելի է Քարլայլի հերթական քողարկու հեզնանքը բենթամյան **օգտապաշտության** հանդեպ²⁸⁶, երբ բանախոսը հռետորական հարց է տալիս՝ «Դանտեի բերած օգո՛ւտը» և պատասխանում՝ «[...] Մենք արևի մասին չենք դատի մեզ տված նրա լույսի քանակով: **Դանտեն կա՛մ անգին է, կա՛մ [առհասարակ] որևէ արժեք չունի**»²⁸⁷:

277 Տե՛ս Christopher Harvie. “Wild Annandale Grapeshot: Carlyle, Scotland, and the Heroic”, էջ 268:

278 On Heroes, էջ 77:

279 Նույն տեղում, էջ 78:

280 Նույն տեղում, էջ 84:

281 Նույն տեղում, էջ 78:

282 Նույն տեղում, էջ 81:

283 Նույն տեղում, էջ 84:

284 Նույն տեղում:

285 Նույն տեղում, էջ 85:

286 Քարլայլն իր երկերում հաճախակի է շոշափում **արժեքի** և **օգտակարության** հակադրությունը, օր.՝ «Արվեստը հարկ է սիրել ոչ թե դրա ունեցած ազդեցությունների համար [...], ոչ թե որ այն օգտակար է հոգեկան բավակա- նության կամ նույնիսկ բարոյական մշակույթի համար, այլ որ այն արվեստ է [...]: Հարցնել արվեստի **օգտա- կարության** մասին նույնն է, թե հարցնել Աստծո **օգտակարության** մասին» (Thomas Carlyle. “State of German Literature” [1827], էջ 56):

287 On Heroes, էջ 85:

Ուշագրավ է նաև իտալացի պոետի վերաբերյալ իր խոսքի վերջաբանում հերոս-բանաստեղծի ու հերոս-մարգարեի միջև Քարլայլի ուրվագծած հակադրությունը: Փաստելով, որ Դանտեի գործունեության շրջանակը շատ ավելի սահմանափակ էր, քան Մուհամմադինը, բանախոսը նկատում է, որ, այդուհանդերձ, աշխարհի վրա Դանտեի ազդեցությունը բնավ ավելի փոքր չի եղել, քան իսլամի մարգարեինը: Ավելին՝ Դանտեի գործելադաշտը նաև «անհամեմատ ազնիվ էր, պարզորոշ ու թերևս **առավել կարևոր**», ուստի նա «կարող է տևաբար **վերապրել Մուհամմադին**»²⁸⁸, որի «նվաճումը պակաս քնարերգական էր»²⁸⁹:

Արդ, **Դանտե հերոսը հանդես է գալիս որպես քաղաքականապես մասնատված Իտալիայի մտահոգևոր միավորիչ ուժ, որի շնորհիվ Իտալիան լեզու է առել**²⁹⁰: Այստեղ արդեն **հերոս պոետը նույնական է հերոս-արքայի՝ քաղաքական ու ռազմական առաջնորդի կերպարին**: Այս առումով տպավորիչ զուգահեռ տանելով Դանտեի ու ռուսական ցարի միջև՝ Քարլայլը գրում է. «[...] Համառուսաստանյան ցարը գորել է իր բազում սվինակիր զինվորներով, կազակներով ու հրանոթներով, և նրա կողմից մեծ սխրանք է երկրի այդպիսի տարածությունը քաղաքականապես միասնական պահելը: Բայց նա դեռևս չի կարողանում խոսել: Նրա մեջ վսեմ մի բան կա, բայց դա համր վսեմություն է: Նա չի ունեցել հանձարի այն ձայնը, որ լսելի լինի բոլոր մարդկանց ու ժամանակների կողմից: Նա պետք է խոսել սովորի: Ցարդ նա մեծ ու համր հրեշ է եղել: Նրա հրանոթներն ու կազակները ժանգոտելու և ի չիք են դառնալու, այնինչ Դանտեի ձայնը տակավին լսելի է: **Դանտե ունեցող ազգն այնքան միաբան է, որպիսին չի կարող լինել և ոչ մի համր Ռուսաստան**»²⁹¹:

Շեքսպիր: Իր «Գարձյալ Ժան Պոլ Ֆրիդրիխ Ռիխտերի մասին» (1830) հոդվածում Քարլայլն առաջին անգամ մեջբերում է Շեքսպիրի «Փոթորիկը»-ի (1610/11) հայտնի տողերը՝ «**մենք ստեղծված ենք նյութից այն նույն, // ինչից որ մեր երազները**»²⁹² [IV, I], որ այդքան ներհյուսված են «Հերոսն իբրև պոետ» բանախոսության մեջ²⁹³: Պիեռի այս բանաստեղծը դարձան Քարլայլի բովանդակ բանարվեստի առանցքային հղացքներից: Այդ չափատողերի վերաբերյալ Քարլայլը 1876 թ. նկատել էր, որ չի կարող մտաբերել «այդքան խորունկ միտք [նույնիսկ] Աստվածաշնչում կամ դրանից դուրս»²⁹⁴: Շեքսպիրյան այդ տողերի գրեթե բառացի մեկնությունը նշանակալի լույս է սփռում Քարլայլի աշխարհայացքին: Ջ. Ռոզենբերգը պատկե-

288 Նույն տեղում:

289 Christopher Harvie. "Wild Annandale Grapeshot: Carlyle, Scotland, and the Heroic", էջ 268:

290 Տե՛ս On Heroes, էջ 97:

291 Նույն տեղում:

292 Բնագրում «We are such stuff // As dreams are made on»:

293 Տե՛ս Benjamin H. Lehmann, նշվ. աշխ., էջ 75:

294 William Allingham. A Diary. Ed. H. Allingham and D. Radford. London: Macmillan, 1907, էջ 247:

րավոր նկատում է, որ **Քարլայլի 30-հատորանոց ժառանգությունն այդ տողերի ընդարձակ մեկնությունն է**²⁹⁵: Իր «Նոթաստերեր»-ում նա այդ տողերն անվանել է «բովանդակ բանաստեղծական տիեզերքի հենքը»²⁹⁶՝ հրնթացս իր ողջ կյանքի իբրև յուրատեսակ կարգախոս ընկալելով այն: Ժան Պոլ Ռիխտերին նվիրված իր վերոնշյալ հոդվածում Քարլայլը մեջբերում է նաև նրա մեկնաբանությունն այդ չափատողերի մասին. «[...] Շեքսպիրյան այդ պատառիկը [...] ամբողջ գրքեր է ստեղծել ինձանում»²⁹⁷:

1838 թ. գրականության պատմության մասին իր բանախոսական շարքում Քարլայլը Շեքսպիրին բնորոշել էր որպես «բնության մեծ գավակներից մեկի, ինչպես Հոմերոսը, Էսքիլոսը, Դանտեն, ձայն, որը գալիս է բնության նվիրական սրտից»²⁹⁸, իսկ «**Չարտիզմ**»-ում (1839/1840)՝ իբրև «արդի մեծագույն եվրոպացու»²⁹⁹: **Հերոսականը համարելով ամեն մի դարաշրջանի համապարփակ բնորոշիչը՝ Քարլայլը նկատում է, որ ինչպես Հոմերոսի շնորհիվ այսօր հաղորդ ենք Հին Հունաստանին, նմանապես էլ հազարավոր տարիներ անց Դանտեի ու Շեքսպիրի միջոցով մարդիկ պատկերացում կկազմեն, թե «ինչպիսին է եղել ժամանակակից եվրոպան իր հավատով ու գործնական կյանքով հանդերձ»**³⁰⁰:

Քարլայլը Շեքսպիրին համարում է բոլոր «պոետների պարագլուխն» ու «մեծագույն ինտելեկտը»³⁰¹ գրականության մեջ, որպիսին ցարդ տեսել է Եվրոպան: Շեքսպիրի համեմատ՝ «**Նոր Օրգանոն**»-ն ու **Բեկոնի** բովանդակ ինտելեկտը «երկրորդական ու աղքատիկ»³⁰² են: Խոսելով **մեծն մարդու պրոթեսայան** հատկանիշից՝ Բրոնսի մասին իր հոդվածում Քարլայլը գրում է՝ «[...] Լավ է նկատված, որ Շեքսպիրը, հղանալով ու ավարտելով իր ողբերգությունները, այնպիսի **դատողականություն է դրսևորել, որով կարող էր պետություններ ղեկավարել կամ «Նոր Օրգանոն» հեղինակել**»³⁰³: Այս իմաստով միայն Գյոթեն է, ըստ Քարլայլի, որ Շեքսպիրից ի վեր այդպիսի ինտելեկտ է ունեցել, քանզի Գյոթեն ևս «**մտահայում էր իրերի բուն էությունը**»³⁰⁴:

Շեքսպիրի մեծությունը բանախոսի համոզմամբ նրա կերտած կերպարների ու պատկերած երևույթների խորությունն է, և նրա «ստեղծարար

295 Տե՛ս **John D. Rosenberg**. *Carlyle and the Burden of History*. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1985, էջ 25:
296 *Two Note Books of Thomas Carlyle*, From 23rd March 1822 to 16th May 1832. Ed. **Charles Eliot Norton**. New York: The Grolier Club, 1898, էջ 187:

297 **Thomas Carlyle**. “Jean Paul Friedrich Richter Again” [1830], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, h. 27, էջ 154:

298 **Thomas Carlyle**. *Lectures on the History of Literature*, էջ 147:

299 **Thomas Carlyle**. “Chartism”, [1839], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, h. 29, էջ 178:

300 On Heroes, էջ 86: Պատահական չէ, որ Քարլայլը «Ղանտեին չի գետեղում Ֆլորենցիայի քաղաքական կյանքի մեջ կամ էլ Շեքսպիրին եղիսաբեթյան Լոնդոնի ընդարձակ, քաղաքային, բայց տակավին անքաղաքակիրթ և նույնիսկ ծովահենային մշակույթում», այլ փոխարենը պարտում է նրանց ընդլայն քաղաքակրթական ու համամշակութային տիրույթում, տես **Christopher Harvie**. “*Wild Annandale Grapeshot*”. Carlyle, Scotland, and the Heroic”, էջ 268:

301 On Heroes, էջ 88:

302 Նույն տեղում, էջ 89:

303 **Thomas Carlyle**. “Burns” [1828], in *Essays on Literature*, էջ 44, նաև՝ On Heroes, էջ 88:

304 On Heroes, էջ 89:

խորազնություն»-ն³⁰⁵ (creative perspicacity) իր նախադեպը չունի. «[...] Եթե ինձ խնդրեն սահմանել Շեքսպիրի տաղանդը, ես կասեմ, որ դա **ինտելեկտի** գերազանցությունն է՝ դրանում ներառելով մնացյալ ամենը»³⁰⁶, քանզի «երբ ասում եմ, որ Շեքսպիրը մեծագույնն է բոլոր մտածողներից, ապա դրանով ամեն բան ասված է նրա մասին: Սակայն Շեքսպիրի ինտելեկտում շատ ավելին կա, քան մենք ցայժմ տեսել ենք: Դա այն է, ինչը ես անվանում եմ **անգիտակից**³⁰⁷ **ինտելեկտ**, որում ավելի շատ առաքինություն կա, քան նա ինքը գիտակցում է»³⁰⁸:

Այսպիսով, Շեքսպիրի բանարվեստն արտացոլում է նրա ինտելեկտի մեծությունը: Քարլայլի համար նա իրավամբ «**մեծագույնն է բոլոր մտածողներից**»³⁰⁹: Բանաստեղծի հերոսական կերպարի իր հանգամանակից քննությունում Քարլայլը հատկանշում է Շեքսպիրի լայնահուն խոհակա-նությունն ու մտքի ճկունությունը, և թե ինչպես է նա համադրում այս երկուսն իր արվեստում³¹⁰: Այն «ուժը, որն առկա է նրա մեջ, ըստ էության **իմի է և անտրոհելի**, [և] այն, ինչ մենք անվանում ենք երևակայություն, մտապատրանք, դատողություն և այլն, լոկ միևնույն **Ըմբռնողության** ուժի զանազան դրսևորումներն են՝ բոլորն էլ անքակտելիորեն կապված միմյանց. իմանալով սրանցից մեկը՝ կարող ենք գիտենալ և մյուս բոլորը»³¹¹:

Քարլայլի գնահատմամբ՝ **Շեքսպիրը ստանձնեց հերոսի ազնվագույն գործառույթը՝** ազատագրելով եվրոպական միտքը «ծանծաղ սնահավատության, դժնի ձգնակեցության, անհանդուրժողության, սաստիկ մոլեռանդության ու ապականության»³¹² կապանքներից: Եթե Դանտեն մարմնավորում էր «**միջնադարյան կաթոլիցիզմը**», ապա Շեքսպիրն ավելի հեռուն գնաց՝ դառնալով «**ճշմարիտ կաթոլիցիզմի երգեցիկ քահանան, ապագայի և բոլոր ժամանակների Տիեզերական եկեղեցին**»³¹³: Իր քնարերգության ուժով նա **ոգեկանությունը** հասցրեց առավել լայնածիր ոլորտների, որտեղ «խիստն ու իմաստնությունը [...] մտահոգևոր հավասարակշռության համա-

305 Նույն տեղում:

306 Նույն տեղում, էջ 90:

307 Այն, որ Շեքսպիրն **անգիտակից/անհաղորդ** էր իր հանձարին, Քարլայլը գրել էր դեռևս իր «**Բնութագրություններ**» հոդվածում (տե՛ս **Thomas Carlyle**. “Characteristics” [1831], in *Critical and Miscellaneous Essays*. Centenary Edition, Խատ. 28, էջ 5): «**Անգիտակցական**»-ի հղացքը Քարլայլի և առիասարակ 18-րդ դարի ռոմանտիկական աշխարհայացքի հիմնակազմիկ հղացքներից է:

308 On Heroes, էջ 91:

309 Նույն տեղում:

310 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 11:

311 On Heroes, էջ 90: Գրականության պատմության մասին իր բանախոսական շարքում Քարլայլը նկատում է, որ մարդկային մտածողությունը մեկ ամբողջություն է և ոչ բազում ունակությունների համախումբ՝ անկախ նրանից, թե ինչ ոլորտում է այն դրսևորվում՝ նկարչության, երգեցողության, մարտի ևն, տե՛ս **Thomas Carlyle**. *Lectures on the History of Literature*, էջ 148: Քարլայլի կողմից այսպես կոչված «**ունակությունների հոգեբանության**» (համաձայն որի կամքը, դատողությունն ու երևակայությունը մտածողությունը կազմող անջատ ուժեր են) մերժումն ակներև ընդհանրություններ ունի գերմանացի փիլիսոփա, հոգեբան և գիտական մանկավարժության հիմնադիր **Յոհան Ֆրիդրիխ Հերբարտի** (1776-1841) հայացքների հետ: Ելնելով Քարլայլյան այս ըմբռնումից՝ լիովին օրինաչափ է թվում հերոսների **չրջելիության** նրա հղացքը, երբ հերոսի տվյալ տիպը կրում է մյուս բոլոր տիպերի հատկանիշներն ու որակները:

312 On Heroes, էջ 94:

313 Նույն տեղում:

տեղելի մասերն են»³¹⁴: Ըստ Դ. Սորենսենի՝ Քարլայլի հերոսների շարքում Շեքսպիրը շահեկանորեն տարբերվում է նրանով, որ համառորեն հակադրում է կանխակալ մարգարեության գայթակղությանը³¹⁵. «[...] Մի՞թե ավելի լավ չէր, որ Շեքսպիրը՝ բոլոր առումներով բնագրական մի մարդ, **տեղյակ չէր** որևէ երկնային առաքելությունից: Նա չէր զգայում, ինչպես որ Մուհամմադը, քանզի **մտահայում էր ներքին հոյակերտությունը** (internal Splendours) [...]: Եվ մի՞թե դրանով նա առավել բարձր չէ Մուհամմադից»³¹⁶:

Շեքսպիրի պատմական դրամաները Քարլայլը համարում է Անգլիայի պատմության շտենարան³¹⁷՝ նկատելով, որ եթե նա ավելին աներ այդ ուղղությամբ, ապա «կարող էր Անգլիայի պատմությունը³¹⁸ մի յուրատեսակ **Իլիականի** վերածել, գրեթե **Աստվածաշնչի**»³¹⁹: Մեջբերելով շեքսպիրյան պատմական դրամաները **ազգային էպոս** համարելու վերաբերյալ **Ա. Վիլհելմ Շլեգելի** (1767–1845) հիշարժան խոսքը³²⁰՝ Քարլայլը հերթական անգամ ակնարկում է, որ **հերոս-պոետը հանդես է գալիս իբրև բովանդակ ազգային նկարագրի արտահայտիչ: Անգլալեզու «ազգային էպոսը», ըստ բանախոսի, մեկնարկում է Շեքսպիրից՝ որպես անգլիական գերիշխանության պոետից**³²¹:

Քարլայլի համոզմամբ Շեքսպիրի երկերի միջոցով, սակայն, անհնար է ամբողջական պատկերացում կազմել նրա մասին: Նրա երկերը լոկ բազում պատուհաններ են, որ մեզ թույլ են տալիս ընդամենը թեթևակի «հայացք նետել նրա ներաշխարհին»³²²: Սրանով բանախոսը հերթական անգամ հատկանշում է, որ **անհնարին է լիարժեքորեն ձանաչել հերոսին ու ըմբռնել նրա ողջ մեծությունը, քանզի հերոսն ու հերոսականը սերտորեն կապված են նաև առեղծվածին և այդ իմաստով անըմբռնելի են**:

Ստեղծագործողի՝ որպես հերոսի հղացքը մասամբ պարառում է նաև արվեստի **անգործնականության** վերաբերյալ **օգտապաշտական** (utilitarian) գնահատականների հերքումը: Քարլայլը պնդում է, որ արվեստի արժեքը որևէ աղերս չունի «**օգտակարություն**» հասկացության հետ: Ուշագրավ է այս առումով բանախոսության ընթացքում Քարլայլի՝ իր բարձրաշխարհիկ լսարանին հասցեագրած հռետորական ու պատկերավոր հարցադրումը՝ «Ինք ինչի՞ց կիրաժարվեք. ձեր Հնդկական կայսրությունի՞ց, թե՞ ձեր Շեքսպիրից»: Ի

314 David R. Sorensen, *Introduction*, էջ 11:

315 Տե՛ս նույն տեղում:

316 On Heroes, էջ 95:

317 Քարլայլը հավատացած էր, որ պատմությունը կապված է պոետիկ հետ, անգամ եթե պատմության մեթոդը գիտական է, տե՛ս Louise M. Young, նշվ. աշխ., էջ 4-5:

318 Քարլայլի պատմահայեցողության ծիրում պոետիկայի և պատմության սերտ առնչությունների մասին տե՛ս **Գևորգ Ա. Ճաղարյան**, Անցյալի պատմականացման ձանապարհին (Թոմաս Քարլայլը և նրա «Դարձեալ ի վերայ պատմութեան» հոդվածը), *Պատմություն և մշակույթ*, Եր., 2020, N 2, էջ 188:

319 Thomas Carlyle. "Shooting Niagara: And After?" [1867], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, հատ. 30, էջ 26:

320 Տե՛ս On Heroes, էջ 93:

321 Տե՛ս Christopher Harvie. "Wild Annandale Grapeshot: Carlyle, Scotland, and the Heroic", էջ 265:

322 On Heroes, էջ 94:

պատասխան իր իսկ հարցին՝ բանախոսը մարգարեաբար ազդարարում է՝ «Հնդկական կայսրությունն ամեն դեպքում երբևիցե կվերանա»³²³, իսկ Շեքսպիրը՝ ոչ. նա առաջադրում է³²⁴ մեզ հետ է, մենք չենք կարող հրաժարվել մեր Շեքսպիրից»³²⁵:

Բանախոսության վերջում Շեքսպիրին ևս մարգարե անվանելով ու համեմատելով նրան Մուհամմադի հետ՝ Քարլայլը, ինչպես վերն ասացինք, նկատում է, որ **Շեքսպիրը Մուհամմադից նույնիսկ ավելի մեծ ու կայացած մարգարե է**, քանզի նա անհաղորդ էր իր երկնային առաքելությանը³²⁶: Դրանից զատ, Քարլայլի համոզմամբ անգամ Արաբիայում Մուհամմադը մի օր ի վերջո իր դարն ապրած կհամարվի և մոռացության կմատնվի³²⁷, այնինչ Շեքսպիրը, հանգույն էսքիլոսի կամ Հոմերոսի, գալիք «անչափելի ժամանակներում տակավին կհավակնի **մարդկության քրմապետի** դերին ինչպես Արաբիայում, այնպես էլ այլուր»³²⁸:

Շեքսպիր հերոսը աշխարհի բոլոր ծագերում ապրող անգլասաքսերին համախմբող ու նրանց համերաշխ գոյակցությունն ապահովող ներուժն է³²⁹, ինչպես որ Դանտեն է իտալացիների համար: Պառլամենտական «արձանագրություններն ու վարչապետներն»³³⁰ անգոր են այդ հարցում: Որպես հերոսականի շրջելիության արդեն որերորդ շեշտադրում՝ Քարլայլը հավաստում է, որ իր թատրոնով բովանդակ աշխարհը նվաճած³³¹ «Շեքսպիրն անգլիական արքա է, որին ո՛չ ժամանակը, ո՛չ դիպվածը, ո՛չ էլ պառլամենտը կամ պառլամենտների համախումբը չեն կարող գահընկեց անել»³³², քանզի «Շեքսպիրը բոլոր ժամանակներում վեր է կանգնած բոլորից: Այդպիսի [որևէ այլ] մարդու աշխարհը չի տեսել»³³³:

323 Ինչպես երևում է, Քարլայլը մշակութային, ստեղծագործական նվաճումները գերադասում է ռազմաքաղաքական, տարածքային նվաճումներից, հմմտ: On Heroes, էջ 48, որտեղ նա քանահրաբար վկայում է «թագերի ու իշխանությունների» անցողիկության մասին:

324 Հատկանշելով «համաշխարհային պոետներ»-ին, որոնց հարկ է «կատարյալ պոետներ համարել» (ինչպես, օրինակ, Շեքսպիրին ու Հոմերոսին), Քարլայլը, սակայն, նկատում է, որ նրանք ևս չեն կարող առաջադրել հիշվել, ուստի և կգա ժամանակը, երբ նույնիսկ **կատարյալ պոետները** մոռացության կմատնվեն, տես On Heroes, էջ 70-71:

325 On Heroes, էջ 96: Քարլայլի մարգարեությունն իրականացավ 1947 թ. Հնդկաստանի անկախացմամբ: Համանման հակադրություն է Քարլայլը խաղարկում նաև «Գյոթեի դիմանկարը» հոդվածում. «Նապոլեոնն իր աուստեռլիցներով, վաթեռյուներով ու բորոդինոներով համակ անցել-գնացել է [...] Այնինչ Գյոթեն տակավին ճառագում է իր անմիջական փայլով» (Thomas Carlyle. "Goethe's Portrait" [1832], in *The Works of Thomas Carlyle*. Centenary Edition, հատ. 27, էջ 373):

326 Տես On Heroes, էջ 95:

327 Ապշեցուցիչ է, որ բանախոսության այս հատվածում Քարլայլը կասկածի է առնում Մուհամմադի ճշմարիտ քարոզիչ ու մարգարե լինելու վերաբերյալ իր նախորդ բանախոսության մեջ հանդես բերած հայացքներն ու համոզումները: Ուշագրավ դիտարկում է անում այս առումով Պիոնկեն նկատելով, որ Քարլայլը դրանով նպատակ ուներ մեղմելու ու չափավորելու «Շերոն իբրև մարգարե» բանախոսությունում Մուհամմադին ու իսլամին տրված հոյժ բարձր գնահատականները ըստ էության **գոթե վիճարկելով Մուհամմադի հերոսականությունը**: Հետևաբար, ըստ Պիոնկեի, Քարլայլը բնավ էլ գերծ չէ Մուհամմադի կերպարի վերաբերյալ ժամանակի տիրապետող նախապաշարուններից պատրաստ անգամ «գոհաբերելու Մուհամմադին Շեքսպիրի մեծության խորանին», տես Albert D. Pionke. "Beyond 'The Hero as Prophet': A Survey of Images of Islam", էջ 9-10: Նաև: <http://www.annaqad.com/en/islam-under-the-microscope/revisiting-thomas-carlyle-and-his-hero-muhammad> (մուտք 08.03.2021):

328 On Heroes, էջ 95:

329 Տես նույն տեղում, էջ 96:

330 Նույն տեղում:

331 Տես Benjamin H. Lehmann, նշվ. աշխ., էջ 20:

332 On Heroes, էջ 97:

333 William Allingham, նշվ. աշխ., էջ 247:

Ամբողջացնելով փաստենք հետևյալը. «Հերոսների մասին» շարքի արդեն իսկ առաջին բանախոսությունում Քարլայլը հստակորեն բանաձևեց **հերոսականության** ուսմունքի մի շարք հիմնական գմիկ հղացքներ ու կաղապարներ, որոնց գաղափարական սաղմերը տարիների ընթացքում ուրվագծվել էին նրա բազում հոդվածներում: Ի հայտ բերված այդ բանաձևերը հանգեցրին այն ստույգ կետին, **որտեղ ի մի եկան Քարլայլի հիմնարար ուսմունքը և ինքնասահմանումի անձնական փնտրտուքը**³³⁴: Պատմաբանից դեպի սոցիալական մեկնաբան անցումը Քարլայլին դրդեց գրքով հրապարակելու բանախոսական այս շարքը, որը հետագա խթանիչ հանդիսացավ նրա բովանդակ ժառանգության ընկալման ու գնահատման համար³³⁵: Հեղինակելով 19-րդ դարի «**թերևս ամենից մարգարեական գիրքն Անգլիայում և Ռոմանտիկական արվեստի գլուխգործոցը**»³³⁶, Քարլայլը հայտնաբերեց այնպիսի պատմական ճշմարտություններ, որոնք նա ինքը լիովին չէր գիտակցում այդժամ³³⁷, և որոնց ըմբռնումն ու արժևորումը սկիզբ առան միայն 20-րդ դարի երկրորդ կեսից:

Գևորգ Ա. Ճաղարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են պատմության տեսության և փիլիսոփայության, 18–19-րդ դդ. եվրոպական պատմագրության ու քաղաքական ինաստասիրության, պատմության և արվեստի աղերսների հիմնախնդիրները:

Էլեկտրոնային հասցե՝ georgeworldhistory@gmail.com

334 Տե՛ս David J. DeLaura. “*Ishmael as Prophet: Heroes and Hero-Worship and the Self-Expressive Basis of Carlyle's Art*”, էջ 732:

335 Տե՛ս Owen Dudley Edwards. “*The Tone of the Preacher*”. Carlyle as Public Lecturer in *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*”, էջ 207:

336 David J. DeLaura. “*Ishmael as Prophet: Heroes and Hero-Worship and the Self-Expressive Basis of Carlyle's Art*”, էջ 732:

337 Տե՛ս Owen Dudley Edwards. “*The Tone of the Preacher*”. Carlyle as Public Lecturer in *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*”, էջ 207:

Summary

THOMAS CARLYLE’S “ON HEROES, HERO-WORSHIP, AND THE HEROIC IN HISTORY”

Part Two: the Hero as Divinity, Prophet, and Poet

Gevorg A. Tshagharyan

Kew words – Thomas Carlyle, lecture, hero, hero-worship, divinity, Odin, Scandinavian mythology, paganism, Christ, Christianity, **great man, utilitarianism**, religion, faith, prophet, Mahomet, Islam, prophecy, **sincerity**, heroes’ **reversibility**, poet, Dante, Shakespeare, poetry, man of letters.

The paper discusses Thomas Carlyle’s (1795-1881) last series of public lectures, “On Heroes, Hero-Worship, and the Heroic in History” (1840), which was the culmination of his four-year experiment as a public lecturer, and was published in book form in 1841.

The study focuses on the three types of Carlylean heroes (divinity, prophet, and poet), which are presented respectively on the background of Carlyle’s perceptions of Norse mythology, Islam, and poetry. Though Carlyle did not allow chronology to define the structural basis of the book, his schema does imply an evolving process in the history of ideas and beliefs. However, in contrast to the evolutionary vision (later formulated by Charles Darwin), **Carlyle’s historical pattern presents a pessimistic, descending scale**. As he sees it, **the form of heroic expression contracts with time, and advancing social circumstances make it increasingly difficult for the heroic spirit to manifest itself**.

Carlyle’s book avoids clear schematization. Nonetheless, his own tripartite arrangement of the subject, as suggested by the book’s full title, provides an appropriate framework for discussion. Specifically, **Carlyle recognized a close interconnection between the hero, the attitude of hero-worship, and the changing historical environment in which the hero worked out his life**. There is a constant interplay between these three elements. **The hero, for instance, provided a dramatic impetus to historical events**. His effect upon others is like that of a **catalyst** or, in Carlyle’s metaphor, a **lightning rod** or **conductor**. At the same time, **the hero does not act in a vacuum or in social isolation**. What the hero says “all men were not far from saying”. **Bound by time and the culture, the hero hears more clearly than others the monitions of the age and directs its struggles**. **The effect the hero achieves often resembles that of the inspired**

poet, “the Seer; whose shaped spoken Thought awakes the slumbering capability of all into Thought”. **He sums up and completes a general will and impulse, and his actions authenticate a commonly held sentiment. These relations between the hero and the hero-worshiper are reciprocal.** The imaginative reader who “shudders at the hell of Dante” himself becomes almost a poet, just as **the ability to recognize a genuine hero is itself a form of heroism.**

In considering such historical figures as Muhammad, Dante, and Shakespeare, Carlyle attempted to redress long-held misconceptions, while in his lecture on Odin he tried to encourage a deeper and more sympathetic understanding of Norse mythology and Scandinavian paganism as a credible religious system. In general, the heroes of the first two lectures, Odin and Muhammad, whose teachings would have struck Carlyle’s Victorian audience as arcane, enabled Carlyle to illustrate his conviction that **genuine religious feeling is grounded in the permanent fact of hero-worship rather than in any outward framework of myths** subject by their very nature to constant historical revision. In selecting Odin as divinity in place of Jesus, the “greatest of all Heroes” (just as he chose Muhammad in place of Moses and the Biblical prophets), Carlyle provoked his audience to think afresh about the evolution of their own religion while his indirection took him clear of giving offense or of becoming entangled in theological difficulties. Equally, **through his treatment of Islam and Scandinavian paganism he could stress the shared nature of all religious experience and the centrality of hero-worship itself.**

Carlyle’s aim in these portraits was to show his heroes in a true light, finally freed from the “falsifying nimbus” of their fame. If, as he hoped, these heroes could be rescued from malice, misconception, and the false report enshrined in the historical record, if they could once again stand clearly before his audience and readers, might not the example lead to the fostering of new heroic avatars? With this in mind, he sought to overturn the traditional Western view of the prophet of Islam as impostor, fraud, and even anti-Christ. It was in his 1838 lectures on literature that he first expressed his opinion that Muhammad was “no impostor at all”, and the surprised response of his audience may have led Carlyle to return to the subject in 1840. Thus, in this lecture, “The Hero as Prophet”, Carlyle went beyond Jewish and Christian tradition to the great prophet of Islam, and revealed in him the essential heroic qualities: **the capability of looking “through the shews of things into things” themselves and a determined readiness to live in submission to the will of God.** Carlyle was aware that his Victorian audience was likely to have a number of prejudices against Muhammad and he faced those prejudices in his passionate defense of the Arab prophet’s truth and sincerity.

Dante and Shakespeare were Carlyle’s two exemplars of the artist-hero. Carlyle’s case for the artist as hero involves in part a rebuttal of utilitarian

estimates of art as useless or impractical. In his accounts of Dante and Shakespeare Carlyle insists that art has a value which is unrelated to price and a usefulness which goes beyond the limits of the utilitarian prospectus. “Will you give up your Indian Empire or your Shakespeare?” he asks his fashionable audience. “Indian Empire will go, at any rate, some day; but this Shakespeare does not go, he lasts forever with us; we cannot give up our Shakespeare!”. **In describing the heroic role of the artist, Carlyle perceives a connection between language and action, which condemns as an absurdity the view that artists are merely passive spectators of the world. In the Carlylean meritocracy men of letters and poets belong equally with statesmen and warriors to the heroic fraternity. In the artist hero are to be found traces of the politician, thinker, legislator, and philosopher, “in one or the other degree, he could have been, he is all these”.** The reverse is equally true, for **there is something of the poet in all other heroes:** “Napoleon has words in him which are like Austerlitz battles,” the marshals of Louis XIV were “poetical men”, and Mirabeau could have been a great writer had the course of his life led him that way.

Summing up the essential data of Carlyle’s public lectures, the following is to be singled out: the author clearly formulated a number of fundamental concepts and patterns of his hero theory, which ideological germs have been outlined in his literary, sociological and historical essays over the years. These conceptions led him to the precise point where his fundamental doctrine and his personal quest for self-definition met. The transition from historian to social commentator that had prompted him to publish the lectures on heroes as a book also contained the seeds for future perceptions and re-evaluation of his legacy. **Writing what is perhaps the most prophetic book of the 19th century England, Carlyle formulated the circle of historical understandings which became influential especially in the second half of the 20th century.**

ТОМАС КАРЛЕЙЛЬ: «О ГЕРОЯХ, ПОЧИТАНИИ ГЕРОЕВ И ГЕРОИЧЕСКОМ В ИСТОРИИ»

Часть вторая: герой как божество, пророк и поэт

Геворк А. Тшагарян

Ключевые слова – Томас Карлейль, лекция, герой, почитание героев, божество, Один, скандинавская мифология, язычество, Христос, христианство, **великий человек**, **утилитаризм**, религия, вера, пророк, Мухаммед, ислам, пророчество, **искренность**, **обратимость** героев, поэт, Данте, Шекспир, поэзия, писатель.

В статье развёрнуто рассматривается последняя серия публичных лекций Томаса Карлейля (1795–1881) «О героях, почитании героев и героическом в истории» (1840 г.), ставшая вершиной его четырёхлетнего опыта в роли публичного лектора и издана в виде книги в 1841 г.

Исследование фокусируется на трёх типах карлейлевских героев (божество, пророк и поэт), которые представлены на фоне воззрений Карлейля о скандинавской мифологии, исламе и поэзии. Хотя и хронология не определяет структурную основу книги, но схема Карлейля подразумевает эволюционный процесс в истории идей и верований. Однако, в отличие от эволюционного видения (позже сформулированного Чарльзом Дарвином), **историческая модель Карлейля представляет пессимистическую, нисходящую шкалу. По мнению автора, форма героического самовыражения сужается со временем, а социальные обстоятельства всё более затрудняют проявление героического духа.**

Книга Карлейля не поддаётся чёткой схематизации. Тем не менее, трёхчастная структура предмета, как указывает полное название книги, даёт основу для обсуждения проблемы. В частности, **Карлейль признавал тесную взаимосвязь между героем, его почитанием и той исторической средой, в которой он жил и творил. Существует постоянное взаимодействие между этими тремя составляющими. Влияние героя на других подобно действию катализатора или, по метафоре Карлейля, громоотвода. При этом герой действует не в вакууме: «все люди недалеки от того, чтобы сказать то, что сказал он; все желали сказать это». Связанный временем и культурой, в которой он проявляется, герой более отчётливо слышит увещания эпохи. Результат, которого он достигает, часто напоминает эффект вдохновенного поэта, «прорицателя, чья высказанная мысль пробуждает дремав-**

шие способности всех людей и вызывает у них также мысль». **Герой подытоживает и завершает общее волеизъявление и порыв, а его действия предопределяют общественное мнение. Эти отношения между героями и почитателями героев взаимозависимы.** Воображаемый читатель, «содрогающийся от Дантова ада», сам становится чуть ли не поэтом, так как **умение распознать подлинного героя сама по себе является формой героизма.**

Рассматривая таких исторических личностей, как Мухаммед, Данте и Шекспир, Карлейль пытался исправить «давние недопонимания» своей эпохи. А в своей лекции об Одине он стремился пробудить глубокое и сочувственное понимание древнескандинавской мифологии и вообще язычества как религиозной системы. В общем и целом, герои первых двух лекций, Один и Мухаммед, чьи учения поразили викторианскую аудиторию своей загадочностью, позволили Карлейлю утверждать, что **истинное религиозное чувство основано на поклонении героям, а не на внешних мифических системах,** подлежащих историческому пересмотру. Выбрав Одина в качестве своего типичного божества вместо Иисуса, «величайшего из всех героев» (точно так же, как он выбрал Мухаммеда вместо Моисея и библейских пророков), Карлейль побудил своих слушателей заново подумать о развитии их собственной религии, в то время как его уклончивость избавило его от запутывания в богословских прениях. Равным образом, **своей трактовкой ислама и скандинавского язычества он подчеркнул общую природу всего религиозного опыта и центральную роль почитания героев.**

Цель Карлейля в этих портретах состоит в том, чтобы представить своих героев в истинном свете, освобождёнными от «ложного нимба» их славы. Если, как он надеялся, этих героев удастся спасти от злого умысла, недопонимания и ложных сведений, зафиксированных в исторических записях, если они снова смогут чётко предстать перед его аудиторией и читателями, не приведёт ли этот пример к рождению новых героических проявлений? Именно исходя из этой позиции он стремился опровергнуть традиционный западный взгляд на пророка ислама как на самозванца, мошенника и даже антихриста. В своих лекциях по литературе (1838 г.) он впервые высказал мнение о том, что Мухаммед «вовсе не самозванец», и удивлённая реакция его аудитории, по всей вероятности, заставила Карлейля вернуться к этой теме в 1840 году. Таким образом, в лекции «Герой как пророк» Карлейль вышел за рамки иудейско-христианской традиции и обратился к великому пророку ислама, раскрыв в нём существенные героические качества: **способность «сквозь внешнюю видимость вещей проникать в их самую суть» и решительная готовность жить в подчинении воле Божьей.** Карлейль знал, что его викторианская аудитория имела предвзятое мнение в

отношении Мухаммеда, и он столкнулся с этими предубеждениями в своей страстной защите истинности и искренности арабского пророка.

Данте и Шекспир - две типичные художники-герои Карлейля. Его аргументы о творческом герое частично включают опровержение утилитарных оценок искусства как бесполезного и непрактичного занятия. В героических портретах Данте и Шекспира Карлейль настаивает на том, что искусство имеет ценность, не связанную с ценой, и полезность, которая выходит за пределы утилитарных воззрений. «От чего вы согласны скорее отказаться – от своих индийских владений или от своего Шекспира?», – спрашивает он свою фешенебельную публику и отвечает: «Индийские владения, во всяком случае, когда-нибудь отпадут от нас, но этот Шекспир никогда не умрёт, он вечно будет жить с нами. Мы не можем отказаться от нашего Шекспира!». **Описывая героическую роль художника, Карлейль усматривает связь между языком и действием и осуждает представления о художниках как всего лишь пассивных наблюдателях мира. В карлейлевской меритократии писатели и поэты принадлежат к пантеону героев наравне с государственными деятелями и воителями. В художнике-герое замечаются характерные черты политика, мыслителя, законодателя и философа, «он в той или иной степени может быть всем этим, он в действительности есть всё это». В равной степени верно и обратное, ибо во всех героях есть что-то от поэта: «Наполеон знал слова, которые можно приравнять к Аустерлицким битвам», маршалы Людовика XIV были до известной степени «поэтическими натурами», а Мирабо мог бы стать великим писателем, если бы обстоятельства жизни привели его к тому.**

Подытожим. В своих публичных лекциях «О героях» Карлейль чётко сформулировал ряд идей теории о героях, зачатки которых были намечены в его литературных, социологических и исторических очерках на протяжении многих лет. Эти идеи привели его к той точке, где соприкоснулись его теория и личный поиск самопонимания. Переход от историка к теоретику истории побудил Карлейля опубликовать свои лекции о героях в виде монографии. **Написав, пожалуй, самую пророческую книгу Англии XIX века, он (сам того не подозревая) очертил круг исторических понятий, которым суждено было повлиять на дальнейшую историческую мысль. Факт, который стал особенно очевидным со второй половины XX века.**

REFERENCES

1. Chagharyan Gevorg A., Ants'yali patmakanats'man chanaparhin (T'omas K'arlaylë ev nra «Dardzeal i veray patmut'ean hodvatsë»), Patmut'yun ev mshakuyt', Yer., 2020, N 2, ej 185-206 (in Armenian).
2. Nits'she Fridrikh, Erker 5 hatorov, germ. t'argm.' H. Movsesi, Yer., «Antares», hat. 1, 2019 (in Armenian).